

հաւատքը ջնջելու եւ Հայք բնականապէս անէծք կը կարդային, անհասկանալի չէ Սելճուկեանց յաջողութեան զլխաւոր պատճառը: Այլապէս՝ որչափ ալ անլուր էին Տուղրիլի մը քանդուածները՝ անկարելի չէր երկրին պաշտպանութիւնը, եթէ դործակցէին նաեւ տեղացիք, եւ իրապէս Վասպուրականի մէջ Սելճուկները յաղթուեցան եւ նոյն իսկ Տուղրիլի անձամբ պաշարուած Մանաղկերտի՝ անյաջող էր: Բայց աւելի կ'արժէր Հայաստանի բազմաթիւ դաւաճաց եւ քաղաքաց լրակատար աւերումը եւ հող ու մօխըր դառնալը՝ մինչեւ Կարին ու Արծն (1048), եւ քանի որ պաշտպանութիւնը մնացած էր Բիւզանդիոնի՝ վերջնական ելքը դժուար չէր գուշակել: Ո՛չ Կոստանդիանոս Դուկասի (1059—1067) եւ Ռոմանոս Դիոյլինէսի (1067—1071) ճգնաժամ, նաեւ մասնակի յաջողութիւնք չէին կրնար առջեւն առնուլ Ալփալանի մը, որ յաջորդած էր Տուղրիլի, եւ որուն անթիւ զնդերը դասական կը գործադրէին այն առակը թէ Ուր ոտք կը կոխեն՝ հոն միայն ամայութիւն կը տիրէ: Ազդուանից եւ Վրաց արքայք անձնատուր ըլլալով՝ համեմատաբար արժան պրծան, ճիշդ ինչպէս Կարուց Աբասեան Գագիկը, որ՝ քանի որ օրինակ ունէր առջեւն՝ փոխանակեց իւր երկիրը, կայսերմէ առնելով Ծուլմուղան՝ Կիլիկեան Տաւրոսի մէջ: Այս փոխանակութիւնը եւ հայ իշխանաց զէպի Տաւրոս գաղթելը դոնէ ապարդիւն չանցաւ՝ Սենեքերիմայ գաղթականութեան պէս: Կիլիկիա կոցաւ երկրորդ հայրենիք ըլլալ Հայոց, մինչդեռ Սեբաստիա բախտակից էր Հայաստանի եւ Գամբաց: Անտիկ Անոյ առման եւ այրացաւեր կործանման (1064) յաջորդեց Կարսը, եւ աւերումն սփռուեցաւ նախ մինչեւ Եփրատ, եւ յետոյ (1069) նաեւ Կապադոքիոնի ռոզողուեցաւ հրոսակներով եւ կոտորածի ու աւերման ամէն սարսափ կրեց: Որչափ ալ Ռոմանոս կրցաւ Դ. Հայքէ վտարել Սելճուկները եւ Խլաթ կը գրիմէր, անդին իւր Փիլաբիտոս գորավարը չարաչար կը պարտուէր ի Գամբաց, եւ Սելճուկներու աւարահարութիւնը կը հասնէր մինչեւ Իկոնիոն: Ամուր Մանաղկերտի առումն լրումն էր այս ամէնուն, եւ այն կարեւորագոյն կէտին յետս զբաւումն պէտք էր ձեռք բերուիլ ամէն գնով: Ռոմանոս իրական մեծ բանակով եկաւ այս իրաց դարձան ընելու, եւ սուաւ ալ

Մանաղկերտը. բայց այն գորարածինը՝ որ Խլաթը պիտի առնուր, պարտուեցաւ: Եւ արեւելքի բախտն որոշուեցաւ ի վերջոյ Մանաղկերտի վճռական ճակատամարտով (1071), ուր Յունաց պարտութիւնը լրակատար եղաւ եւ կայսրն ալ գերի ինկաւ (թէ եւ մեծ դուժարով ազատեցաւ, բայց դուր էր զարձը՝ աչքերը բրեցին Ատանայի մէջ: Հայաստանի եւ Կապադոքիոնի կորուստը վերջնական էր, եւ այնու ջախջախած էր Բիւզանդիոնի այս ոյժը՝ որ միշտ առոյգ մնացած էր, այս երկիրներէն առնելով իւր քաջագոյն զնդերը, նշանաւոր գորավարներն ու մեծ կայսրները: Յոյնք չկրցան կանգնիլ այս ծանր հարուածէն (Գէլցէր), զոր սակայն իրենք պատրաստած էին իրենց ձեռքով: Որչափ ալ կար տակաւին Բարձր-Հայոց գիծը, բայց ա՛լ ոյժ չկար վերականգնելու կործանածը: Եւ երբ Ալփալանի յաջորդեց Մելիք-Շահ (1072—1092) եւ իւր Սուլէյման եղբորորդոյն յանձնեց Յունաց գէմ պատերազմի շարունակութիւնը, վերջինս՝ մահացու հարուած տուաւ Բիւզանդիոնի նոյն իսկ բարեկարգական դրութեամբ (զլխահարկէ ազատու գիւղացւոց, հողազուրկներու հող տալ եւն, գիւղացիութիւնն ասով Սելճուկներու հետ, եւ այս օրէն կը սկսի Փոքրասիական «հելլենացած» բնիկներու նոյն չափով թրքացումը), մինչդեռ անդին դահակալական կոխներ կը մղէին Յոյնք (Ուրսէլ՝ իւր Նորմանտացիներով եւ Կեսար Դուկաս): Արդէն այս անգամ Բիւզանդիոն ստիպուած էր Սելճուկներէն խնդրել՝ որ վերջ տան այս խռովութեանց, որ իրապէս կատարուեցաւ, բայց Սուլէյման կանխաւ դաշնագիր եղաւ՝ որով ճանչցուեցաւ օրինաւոր տէր արեւելքի տիրած բոլոր երկիրներուն (1074): Եւ եթէ Սուլէյման միայն զորավար էր՝ արդէն Ղլիճ-Ասլան «արքայ» էր Իկոնիոնի (Ղոնիա), եւ այն՝ «Հոռոմ» թագաւոր (1092—1110): Ասկէ անդին՝ ա՛լ պէտք չկայ շարունակելու:

(Շարունակելի:)

ՍԵՐԱՍԻՍԻՍԻ ՎԵՆՔԵՐԸ

1.

Ս. ԱԹԱՆԱԳԻՆԵՒ ՎԱՆՔԸ

Խանձառի մօտերը շէնքի մը աւերակները կը տեսնուին: Կը կարծուի թէ վանքի մը հետքերն ըլլան¹: Հոն բնակած է Ս. Աթանաղինէ եւ այս պատճառով անոր անունովը կնքուած է սրբավայրը, մինչդեռ ուրիշ անուն ունեցած ըլլալու է (Նաթանեան Պ. Վ., Տեղեկագիր Ընդհանուր վիճակին Սեբաստիոյ, Կ. Պոլիս, 1877, էջ 162):

2.

ԱՆԱՊԱՏ ԿԱՍ ՁԱՐ (Ա.) ԽՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Սեբաստիայի հիւսիսային կողմը՝ Դաւրայ գիւղի ծայրը, Մայրազոմ լեռնաշղթային ստորոտը (Ս. Նշանի վանքէն գրեթէ քառորդ ժամը հեռի եւ անոր արեւմտեան կողմը) հիմնուած է Անապատ վանքը կամ Չարախափան Ս. Աստուածածին (Բիւզանդիոն, 1900, Թ. 1158): Ունի գեղեցիկ տեսարան եւ առողջարար օդ: Անոր տաճարը, որ Սեբաստիայի Պետրոս առաջնորդին հողատարութեամբը նորոգուած է², փոքր է եւ ընծայուած Ս. Աստուածածինի: Սարգիսեանի օրով «եկեղեցին եւեթ կանգուն» էր, եւ «արտաքին որմունք մեկնաստանին», իսկ «բնակարանքն ի սպառ աւերակք» (Տեղադրութիւնք, էջ 64): Սակայն ետքէն շինուած են սենեակներ ուխտաւորներու համար, որոնք ամառը հոն կ'երթային նաեւ օդափոխութեան համար (Սրուանձտեանց,

¹ Սեբաստիայէն 9 ժամ հեռու՝ Պաղչեճիք գիւղին քովերն ալ կարծես հին վանքի մը մնացորդները կը գտնուին (Պայեան Տ. Եպ., Հայ Վանօրայք, Իգմէր, 1914, Ա., էջ 121—122):

² Կանխաւ զայն վերաշինած է Առաքել արքեպիսկոպոսը: Տաճարին դրան ճակատը քարի մը վրայ դրուած է՝ «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ ՎԵՐԱՍԻՍԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԶԵՌԱՄԲ ԱԿՆԵՑԻ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԳԱՊԵՏԻ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՌՈՂԻԿԵՆ, Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԵՍ, Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՃԱՐԻՆ ՀԱՆԳԵՐՁ ԺԱՄԱՏՆԵՐՈՎ ԵՒ ՊԱՐՍՊՈՎ, ՀԱՆԳԵՐՁ ԽՅՆԵՐՈՎ, ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ԿԱՍՐԿԱՊՅԻ ԹԵՒԵԲԵԼԼԵՍՆ Տ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ 1176: ԴԱՐՁԵԱԼ ՎԵՐԱՍԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԶԵՌԱՄԲ ՆՈՅՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԳԱՊԵՏԻ Ս. ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՇՐՁԱՊԱՏ ՊԱՐԻՍՊ(Ը) ՀԱՆԳԵՐՁ ԽՅՆԵՐՈՎ ԱԿՆԵՑԻ Ս. ՍԵՂՈՍԵԱՆ, ԱՊՈՒԶԵՆՅԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ, ՈՐ Է ՅՈՎԵՍՆ ԶԱՏԵ ԵՒ ԿԱՍՐԿԱՊՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻՆ ԵՒ ՄԱՐԿՈՍ ԱՂԱ(Յ)ԻՆ, ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ 1191: ԸՆԹԵՐՅՈՂՔ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ»: (Նաթանեան, Տեղեկագիր Վիճ. Սեբ., էջ 15—16):

Թորոս Աղբար, Ա., էջ 163—164, Պաղչեան, Հայ վանօրայք, Ա., էջ 106, Բիւզանդիոն, 1900, Թ. 1115 եւ Նաթանեան, Տեղեկագիր Ընդհ. Վիճ. Սեբ., էջ 16—17, Նոր Այդ, 1913, էջ 101):

Անապատի հիմնարկութեան բոլոր սրբազանները կը մնան անձանօթ, սակայն Սեբաստիայի հին վանքերէն ըլլալ կը թուի: Աւանդութիւնն անոր մատուցներէն մէկին շինութիւնը Ս. Թադէոսի կը վերադրէ (Նաթանեան, անդ, էջ 16): Յայտաւորք մը՝ «Գրեցաւ (մատեանս) ի ՁԼԳ թվին (1284) ի հայրապետութեան Յակոբայ եւ ի թագաւորութեան Լեւոնի, ի մայրաքաղաքն Սեբաստիա, ի ձեռն Ռուբինեայ ի վանս Անապատ կոչեցելոյ» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 391): Երկու դար յետոյ՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՁԼԳ... ի յերկիրս Սեբաստիոյ, ի յանապատիս, որ հանդէպ Սեբաստիոյ է, ձեռամբ Փիլիպպոս Էպիսկոպոսի, ի դրան սուրբ Աստուածածնիս յիշեցէք ի բարին զհայրապետ վանիցս զտէր Խաչատուր արեղայ եւ զեղբայր իւր զՍողոմոն արեղայն եւ զմիւս Խաչատուրն» (Սարգիսեան Հ. Բ., Մայր Յունցակ, Վենետ., Ա., էջ 598): Քանի մը տարի վերջը՝ 1499ին Խաչատուր արեղան Գանձաբան մը կը գրէ՝ «Ի քաղաքս Սեբաստիա, ի վանս որ կոչի Անապատ ի դրունս սուրբ Աստուածածնին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Սողոմոնի եւ տէր (տեառն) Խաչատուրին եւ այլ միւրան եղբարցս» (Հանդ. Ամս., 1927, էջ 316): Գրիգոր արեղան 1543ին «... ի վանգս Դահուոս ի դուռն սուրբ Աստուածածնին...» կը գրէ Աւետարան մը (Հանդ. Ամս., 1925, էջ 376—377). իսկ Սարգիս 1616ին՝ «... ի գիւղն, որ կոչի Դահուոս ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստեփանոսին», կ'արտադրէ Տօնացոյց մը (Քէշիշեան Հ. Մ., Յուցակ հայ Ձեռագրաց Չմամուի, Թ. 407, անտիպ): Նոյն անձը մէկ տարի յառաջ (1615ին) կը գրէր Քարոզգիրք մը եւ անոր յիշատակարանին մէջ իր ուսուցիչին՝ Խաչատուրի մահը կը ծանուցանէր՝ «Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի Սեբաստիա ի գիւղն, որ կոչի Դահուոսայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստեփանոսի Նախավկային... ի թուականիս Հայոց Ռ. ու ԿԳ ամին, ի հայրապետութեան

Տեառն Տէր Մեղիսեթին...: Յիշեսջիք զՍարգիս երէցս (զծողը)... Յիշեսջեք զուսուցիչս իմ զԽաչատուր կրօնաւորն, որ հանգուցեալ է... եւ դարձեալ զտէր Կարապետ կրօնաւորն, որ զթուխտս կոկեց եւ զսուրբ գիրքս ետ գրել... եւս առաւել զԱնգրէաս արքեպիսկոպոսն, որ պահեաց զԿարապետ աշակերտն ի քովն, ի սուրբ Նշանն կերակրեց եւ մխիթարեց, որ մինչեւ աւարտունն գրոցս...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, Թ. 973):

Ընդարձակ յիշատակագրութեան մը մէջ 1636ին կը յիշուի՝ «Յօհաննէս եպիսկոպոսն սուրբ Անապատի» (Նաթանեան, Տեղագր. Ընդհր. վիճ. Սեր., էջ 100—106):

ԺԸ. դարու առաջին կիսուն Անապատի առաջնորդն էր Յակոբ Սեբաստացի վարդապետն, որ Պալիսի յորջորջուած է (Հանդ. Ամս., 1928, էջ 493): Նա ծերութեան հետեւանքով վանքը կը լքէ եւ Սեբաստիա կը հաստատուի, սակայն առանց վանահայրութեան պաշտօնէն հրաժարելու: Այդպէս վանքը մնալով անհովիւ՝ «սկսաւ քայքայիլ»: Այն ատեն Սեբաստացի սրտցաւ իշխանները ներկայանալով Յակոբ վարդապետին զինքը կը յորդորեն առաջնորդութենէ հրաժարելու: Յակոբ անոնց խնդիրքը կը կատարէ, սակայն բաւական մեծ դժուարութեամբ: Իշխանները զոհ սրտով անոր քովէն կը հեռանան եւ Ս. Նշանի Առաքել եպիսկոպոս առաջնորդին «Յանձնեցին... զսուրբ Անապատն ի Սեպտեմբեր 8, թափուր եւ ունայն ի զգեստուց եւ յանօթից, խարխալեալ եւ քայքայեալ, եօթն հարիւր դահեկան պարտեօք» (Դիւան, Ժ., էջ 413, հմտ. եւ Ս. Նշանի վանքը): Առաքել ժողովրդեան բաղձանքը եւ վանքին օգուտը նկատի ունենալով իրեն վստահուած պաշտօնն ու պարտականութիւնը յանձն կ'առնու: Գիտակից է նա գործին ծանրութեան, սակայն անյապաղ աշխատանքի կը լծուի: Անապատին վերաշինութեան եւ վերանորոգութեան հրամանագիրը բղբելիքն կը հանէ եւ 1742 Մայիս 7ին «Կանդնեաց զգարիսպն շուրջանակի, շինեաց զգմբէթ տաճարին, որ անկեալ էր եւ զեղին փայտիւ ծածկեալ նորոգեաց եւ զտանիսն, զառաստաղն, զվամարսն, զյատակսն, նաեւ զգաւիթն բոլոր եւ սպիտակացոյց: Շինեաց եւ զառաջնորդարան կրկնայարկ զոյգ զոյգ զեղեցիկ սենեկօք, լայն եւ ընդարձակ մեծամեծ լուսամտիւք եւ առաջի նորա պարտէզ եւ բու-

րատան եւ կից նմին մարագ յարդի եւ տեղիք անասնոց եւ ի վերայ նոցա սենեակք ուխտաւորաց, շինեաց եւ զտնտեստուն եւ մառան ներքոյ եւ արտաքոյ եւ կից նմին դարձեալ սենեակք ուխտաւորաց եւ ի հարաւակողմն եկեղեցւոյն սենեակք միարանից, զոր ի լրման միոյ ամի աւարտեաց զշնուածն ամենայն» (Դիւան, Ժ., էջ 414):

Շատ աննպաստ պարագաներու մէջ կ'ըլլայ Անապատի հիմնական վերանորոգումը եւ սակայն բարեբաստօրէն մէկ տարուան մէջ յաջողութեամբ զլուրս կ'ելլէ ժողովրդեան նուիրատուութիւններովը եւ կարող վերակացուներու շնորհիւ, որոնք էին Յարութիւն Վ. Ե(ր)զնկացի, Կարապետ Վ. Կարմըրկացի, Սահակ Վ. Ուռնայեցի, Անդրէաս Վ. Պուղտանցի, Թովմաս Վ. Սեբաստացի, Ստեփանոս Վ. Եւզոկիացի եւ տէր Նիկողայոս Հողդարցի (Անդ, էջ 414—415):

Այս ժամանակէն սկսած Անապատ Ս. Նշանի առաջնորդներու իշխանութեան ներքեւ այլ եւս կը մնայ մշտաբար (հմտ. եւ Դիւան, Ժ., էջ 421) եւ անոնք զայն կը կառավարեն տեղապահներով: Անոնց շարքին մէջ անուանի է Ս. Նշանի միաբան Յարութիւն Վ. Ե(ր)զնկացի, որ «հրամանաւ Կարապետ արքեպիսկոպոսին Ակնեցւոյ եկաց ուխտ ի սուրբ Անապատն, արար զպատմութիւն սկսեալ ի մահուանէ անտի Աստուածատուր արքեպ. Դմբուկ կոչեցելոյ եւ յառաջնորդութենէ Առաքել արքեպիսկոպոսի մինչեւ ցվախճան իւր եւ հասեալ յաւուրս ծերութեան հանդեաւ ի Գրիստոս եւ թողեցաւ ի վանս սրբոյ Անապատին ի հիւսիսակողմն զրան տաճարին եւ շիրիմ նորա հաւասար յատակին» (Դիւան, Ժ., էջ 419): Յարութիւն վարդապետը 1759ին շինել կու տայ Անապատի բեմի «ծաղկեալ քարինքը» (Անդ, էջ 419): Անկէ 50 տարի յետոյ, 1809ին Յովհաննէս Բ. եպ. ի (Սեբաստիայի) օրով Անապատի ուխտ էր Աւետիք վարդապետը (Դիւան, Ժ., էջ 429):

Անապատի վանքը երբեմն ունեցեր է բաւական կալուած եւ հարստութիւն (Նաթանեան, Տեղ. Սեր., էջ 19: Նոյնը կը հաստատէ Արչակ աւագ Սարկաւագ Միհրդատեանց, որուն ձեռագիր մէկ գրութիւնը — քանի մը թուղթ — Անապատի մասին աչքին առջեւը եղած է): Ժամանակ մը Անապատ որբանոցի վերածուած է (Նոր Այգ, 1913, էջ 101):

3.

ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ

Կը գտնուէր Դուրասարի վրայ, Գըլլըտեղ գիւղին մօտերը. աւերակ (Սրուանձատեանց, Թորոս Աղբար, Ա., էջ 166, Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 115—116, Բիւզանդիոն, 1900, Թ. 1264):

4.

ԳԵՆՈՅԱՅ Ս. ԳԵՆՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Սեբաստիայէն տաս ժամ եւ Զառայ գիւղաքաղաքէն մէկ ժամ հեռու, Ալլիս գետի ձախակողմը, խօճասար կամ Պետրոսի կամ Տէվէսէ գիւղին մէջ կանդնուած է Ս. Գէորգի վանքը (Բիւզանդիոն, 1900, Թ. 1264), որ նմանապէս կոչուած է Տեւոծի, Դեւոճայի Դեւոճկայի, Դեւոցայ, Տայօցայի, Տէվէկսէի, Տէվէսէկի եւ Տէվէրէկի Ս. Գէորգայ վանք (Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 120): Տէվէկսէի կամ Տեւեկսէի աղաւաղունն է Դեւոճա, Դեւոցա կամ Տեւու, որ աւանդութեան համաձայն ի սկզբանէ այսպէս կոչուած է զեւօճի մը պատճառով. «Աւանդաբար կ'ըսուի թէ ժամանակաւ մօտերը բնակող զեւօճ մը ժամանակ ժամանակ վանքին նախնիները եւ տուար ու մարդ յափշտակելով կը լափէ եղեր եւ որ վանքին վանահայրներէն միոյն հրաշիւքն քար կտրեր է. ցարդ ցոյց կու տան քարացեալ այդ մնացորդը, որ արդարեւ հսկայ վիշապի մը կը նմանի» (Նոր Այգ, 1913, էջ 123—124, հմտ. եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1264, Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 121): Կամ Հ. Ինճիճեանի խօսքերովը՝ «Յայսմ վայրի ասեն հալածեալ սրբոյն Գէորգայ զղեւս, յայնմանէ կոչեցաւ տեղին Դեւոց (Դեւոցա), իբրեւ տեղի գիւլաց» (Նոր Հայաստան, էջ 288):

Առաջին անգամ Ս. Գէորգի վանքը 1350ին կը յիշուի (հմտ. Ս. Նշանի վանքը): Ապա դարեր յետոյ (1533) կը տեսնենք Հայրապետ արեղան, որ կը նահատակուի՝ «Ի թուին ԶԶԲ յետ բազում բանտից եւ տանջանաց վանս ի Գրիստոս Յիսուս հաւատոց Տեւոցւոյ վանուց միաբան Հայրապետ արեղայն հրով ողջակիզեալ կատարի»³ (Դիւան, Ժ., էջ 395,

³ «Տէվու վանից Հա(յ)րպետ արեղան երեցին» (Տալեան Հ. Յ., Մայր Յուցակ, էջ 871): Չեռազրի մը մէջ կայ՝ «Վկայաբանութիւն Հարապետ արեղային, Սայ էր ի Սեբաստիոյ ի Տեղոցայոյ սուրբ Գորգու վանացն (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., 1533, Բերլին):

Առաքել Դաւրիթ. Պատմ., էջ 630, Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 6):

Ինչպէս կը տեսնուի նպրզապէս Տեւոցա⁴ վանքը գրուած է առանց Ս. Գէորգի յաւերումի: Նոյն դարուն վերջերը՝ Ս. Գէորգի առաջնորդն է Մկրտիչ եպիսկոպոս եւ միաբաններէն են Ալեքսանոս եւ Յովհաննէս (Դիւան, Ժ., էջ 400): Մկրտիչ կը յիշուի զեւ 1640ին (Նաթանեան, Տեղեկագիր Վիճ. Սեր., էջ 102, հմտ. եւ Դիւան, Ժ., էջ 400):

Ս. Գէորգի վանահայրներէն եղած է նմանապէս Աբէլ եպիսկոպոս Եհնիշէհիցի, որուն մասին ընդարձակ գրութիւն մը ունի Հ. Գր. Գալէմբեարեան (հմտ. Հանդ. Ամս. 1914, էջ 583—594 կամ Կենսագրութիւններ երկու Պատրիարքներու..., Ա., Վիեննա 1915, էջ 235): Նա կը վկայէ՝ «Եւ ես Աբէլ վարդապետս, որ այժմուս նստեալ կամ ի Դեվոցայ վանս սրբոյն Գէորգայ զարավարին» (անդ, էջ 593):

Սիմէոն կաթողիկոսի հրահանգին համեմատ 1747ին Սեբաստիայի Յակոբ Բ. արքեպիսկոպոսը Սեբաստիայի շատ մը վանքերու ընդհանրական առաջնորդ կը նշանակուի (Դիւան, Ժ., էջ 420), որով անոր իրաւասութեան կ'ենթարկուի նաեւ Ս. Գէորգ: Անիկահոն տեղապահ կը կարգէ Մկրտիչ Վ. Բաթրիկեան, որ իր պաշտօնը խղճատօրէն կատարելու հետամուտ չ'ըլլար, մանաւանդ թէ վանքին անկումին պատճառ կ'ըլլայ եւ երբ Պոլիս կ'անցնի՝ «Իր ընտանիքը գրաւեցին վանքը, կ'ուտէին արդիւնքը եւ վանքին աւերման հոգ չ'էին տաներ» (Աղեքսանդրեան Ա. Վ., Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետիկ 1911, էջ 212—213):

Գուցէ Բաթրիկեան հետը Պոլիս տարած ըլլայ խորանի այն գողնոցը, զոր Հ. Գալէմբեարեան այն տեղ կը տեսնէ եւ որուն վրայ գրուած է՝ «Յիշատակ է կոկնոցս հասարակ ժողովրդեանն եւ համայն ննջեցելոցն ի դուռն Դեվոցայ Սուրբ Գէորգին ծեռամբ Դավիթի սրդի Յակոբին ՌՄԼԳին» (1784, Հանդ. Ամս., 1914, էջ 585):

Սրուանձատեանց իր օրով Ս. Գէորգ արդէն Սեբաստիայի աւերակ վանքերէն գիտէ (Թորոս Աղբ., Ա., էջ 116): Թերեւս Բաթրիկեաններն երկարատեւ անոր անհոգ տէր տե-

⁴ Տեւոցա գիւղը կը յիշուի ուրիշ սրբերու յիշատակութեամբ եւ կամ անոնց նուիրուած սրբավայրերով (Ս. Աստուածածին, Ս. Լուսաւորիչ, [Ս. Փրկիչ] եւ Ս. Թէոդորոս կամ Ս. Թորոս, հմտ. Հանդէս Ամսօրեայ, 1914, էջ 585 եւ անդ, 1926, էջ 456):

նոցա զաւակս եղին աւետարանս ի յիշա-
տակ...» (Մաղաղաթեայ Աւետարան Ս. Յով-
հաննու վանքի ի Տարօն, յիշատակարանիս
արտագրութիւնը Գեղամին է, բայց հմմտ.
եւ Բիւզանդիոն, 1904, Թ. 3159 եւ Պալեան,
Հայ Վանօրայք, Ա., էջ 119):

Այս յիշատակագրութենէն վերջ երկա-
րատեւ լուծիւն: 1453ին Կիւրեղ կը կազմէ
Աստուածաշունչ մը որուն հանդիպած է «ի
սուրբ անապատս սրբոց Հրեշտակապետաց»
(Հանդ. Ամս., 1923, էջ 71), իսկ 1487ին
գրուած Աւետարան մը Շահամիր կը ղենէ՝
«յիշատակ ի դուռն սուրբ Հրեշտակապետին»
(Հանդ. Ամս., 1925, էջ 264): Գրեթէ դար
մը վերջը՝ 1593ին կը յիշուի Յովհաննէս ա-
ռաջնորդը, որ Պետրոս եպիսկոպոսի հետ կը
յաջողի Ս. Սարգսի փոքրիկ մատուռը բանալ
(Դիւան, Ժ., էջ 399—400):

Յովհաննէսի մասին ունիմ սա կարեւոր
յիշատակագրութիւնը՝ «... Յանգացող եղեւ
այսմ հոգելից տառիս... (Մեկնութիւն ԺԲ.
Մարգարէից) երեցս երանեալ տիեզերալոյս
եւ պայծառ ջահն եկեղեցոյ զեղեցիկ եւ
քաղցրաձայն տատրակն անապատի Յովաննէս
քաջ հոգեւորն, որ ետ գրել զսա իւր յիշատակ
յաւիտենական եւ ծնաւոյց իւրոց հաւրն Յա-
կոբին, որ փոխեալ է առ Քրիստոս եւ մաւրն
Թամամին եւ եղբարն փոխեալ առ Աստուած
Յախիճանին եւ միւս եղբարն պարոն Սոջայ
Առաքելին եւ նորարողը իբրեւ զճաղիկ
ծաղկեալ որդւոցն Սոջայ Յակոբին եւ Սար-
գիսին եւ զեռարուսիկ Սաֆարին... ի վայե-
լուան Յովաննէս վարժապետին եւ ի վարժ
կրթութեան աշակերտեալ մանկանց իւրոց...
որ ժողովեալ կան իւրուան համալսարանի
եւ ծարաւի են բանին կենաց...: Այդ եղեւ
զրաւ գրչութեան սորա ի շրջակայութեան
հայկազան տումարի ՈՍԸ (կարգալ՝ ՌՍԸ)
ի դառն եւ անբարի եւ վշտաշատ ժամանակի
որ երերուն եւ տատանեալ կայ ազգս քրիս-
տոնէից ի ձեռն այլազգեաց եւ անիրաւ պա-
հանջողաց, զրեալ ձեռամբ յողնամեղ եւ ա-
նարհետ եւ փծուն գրչի Ալեքսիանոս զպրի
ի քաղաքն Սեփաստիոն ընդ հովանեաւ երկնա-
հանգէտ մեծարգոյ զերահոշակ սուրբ ուխ-
տիս սուրբ Հրեշտակապետ կոչեցեալ հրեշ-
տակարանակ մենաստանիս... յառաջնորդու-
թեան սուրբ ուխտիս Ովաննէս վարդապետին
սորին ստացողին, զոր (?) այժմ է ի սպասաւո-
րութիւն սուրբ ուխտիս...» (Macler, Notices
de manuscrits arméniens vus dans quelques

Bibl. de l'Europe centr., Paris 1913, էջ 28—29):
Գրչագիր Ալեքսիանոս 1600ին կը գրէ ուրիշ Ձե-
ռագիր մը, որուն մէջ դարձեալ Յովհաննէսի
դրուատակից յիշատակութիւնը կ'ընէ՝ «Արդ
եղեւ զրաւ գրչութեան սորա ի թուականու-
թեանս ՌՍԹ (1600) ձեռամբ փցուն եւ ա-
նարհետ Ալեքսիանոս զպրի Անթրպոյ ընդ
հովանեաւ... սուրբ ուխտիս Յովաննէս քաջ
բարունապետի ստացողի գրոցս այս եւ Մե-
քիսէթ եպիսկոպոսի՝ աշակերտի սորին եւ
զտէր Դանիէլ հօրեղբորորդի վարդապետին
եւ աշակերտ յիշեցէք ի Տէր եւ զամենայն ա-
շակերտեալ մանկունս՝ զտէր Յակոբ ճգնա-
սէրն եւ զՄեքիսէթ եպիսկոպոսն եւ զտէր
Դանիէլն եւ զՊաւղոս եպիսկոպոսն եւ զԿա-
ֆայի տէր Մեսրոպ շնորհաւք զարդարեալն:
Արդ եւ ես... Ալեքսիանոս, որ եմ յերկրէ
Գերմանիոյ, որ է Անթապ եւ եկի պան-
ղըխտարար եւ բնակեցայ ի Սեբաստիա առ
ոսս հօրեղբորորդւոյ իմոյ տէր Յովաննէս
վարդապետի եւ էի զարիպ եւ տրտմեալ
ողով...: Վասն որոյ աղաչեմ յիշել...
զԱլեքսիանոս եւ զհայրն իմ զՎարդան եւ
զմայրն իմ զՓաշուկն եւ զեղբայրքն իմ զտէր
Դանիէլն եւ զտէր Սարգիս... Դարձեալ յի-
շեցէք զուսուցիչն իմ զտէր Մարտիրոս Հի-
ղանցի լուսատուն հայկազ(ե)ան ազգին եւ
պարծանք եւ պարիսպ ազգիս մեր: Յիշեցէք
ի Քրիստոս եւ զեղբայրութիւնս իմ զՅակոբ
զպրիս որ ի մի կրթարանէ լեալ ուսաք զար-
հետ գրչութեան եւ գրեցի զայս Մեկնիչս
ես մեղաւոր Ալեքսիանոս եւ համշիրակ եղ-
բայրն իմ Յակոբ զպրիս զրեաց զքաղուածոյ՝
Գործոց Առաքելոց» (Ակինեան, Հաւաք. Յի-
շատ. էջմ. 1399, Մեկնութիւն Գէորգ Լամ-
բրոնացւոյ. հմմտ. Կարենեան, Յուց. էջմ.
Թ. 1338):

Նոյն թուականին Սեբաստիայի մէջ «...ի
վանս Հրեշտակապետի կոչեցեալ, առաջնոր-
դութեան ուխտիս եւ վերադիտողի Սեփաս-
տիանու նահանգիս Յովհաննէս քաջ բարու-
նապետին» Յակոբ Ձեռագիր մը կը գրէ, որ
Անտոնեան Հայրերու մօտ էր Պոլսոյ մէջ
(Ակինեան, Հաւաք. Յիշատ. 1600):

Տէր Մեքիսէթ եպիսկոպոսին առաջնոր-
դութեան ժամանակը 1619ին՝ «ի վանս սուրբ
Հրեշտակապետի» Աւետարան մը կը գրուի
(Հանդ. Ամս., 1925, էջ 475):

1632ին կը մեռնի Յովհաննէս Կաթողի-
կոսին աշակերտը, որ Հրեշտակապետին վան-
քին երկարատեւ առաջնորդութիւն կ'ընէ եւ

անոր համար նպաստ կը հաւաքէ (Գր. Դա-
րանաղյի, Ժամանակագրութիւն, էջ 333):

Իսկ 1636ին¹¹ առաջնորդ կը յիշուի Նի-
կողայոս եպիսկոպոս (Դիւան, Ժ., էջ 401 եւ
Նաթանեան, Տեղ. Սեբ. Վիճ., էջ 100):

Ապա առաջնորդ կ'ըլլայ Պետրոս, որ
1659ին Աւետարան մը կը գրէ: Նա 1651ին
ուրիշ Աւետարան մը Ս. Հրեշտակապետի մէջ
կը գրէր, երբ դեռ սարկաւազ էր (Հանդ.
Ամս., 1925, էջ 575, 926, էջ 546):

Անկէ յառաջ — 1652ին — կը գրուի դեռ
ուրիշ Աւետարան մը «Ձեռամբ սուտանուն
տէր Յովակիմի, ի դաւառն Սեբաստիոն, ի
վիւղն, որ կոչի Աղտ¹¹ ի դուռն Ս. Կարա-
պետին եւ սուրբ Հրեշտակապետին ի յառաջ-
նորդութեան տէր Սաչատուր բարունապե-
տին» (Ոսկեան Հ. Հ., Մայր Յուց. հայ.
Ձեռ. Մատ. Մխիթ. ի Վիեննա, Բ., Թ. 841
(հին Թիւ 935), էջ 560, անտիպ): Հետեւա-
բար Պետրոսն յառաջ վանքին վարչութեան
զեկը Սաչատուրի ձեռքն էր:

Մէկ տարի յետոյ — 1653ին — «ի սուրբ
ուխտն Հրեշտակապետի» Շնորհալիի Մատ-
թէոսի մեկնութիւնը կը գրուի (Մմբա-
տեան, Գեղարքունիք, էջ 406, Ամատունի,
Յուց. հայ. Ձեռ. Սեւանայ, Թ. 71, ինչպէս
եւ Մառ, Յուց. հայ. Ձեռ. Սեւանայ, էջ 23):

Գրեթէ կէս դարի լուծեան յետոյ 1705ին
Ս. Հրեշտակապետի առաջնորդ կը դառննք
Աստուածատուր եպիսկոպոսը (Դիւան, Ժ.,
էջ 406, հմմտ. եւ Հանդէս Ամսօրեայ, 1928,
էջ 493): Անոր դործունէութեան մասին հե-
տեւեալ կարեւոր տողերը ունինք՝

«Ծրագրեցաւ Բժշկարան զիրգս ձեռամբ
Աստուածատուր վարդապետի որդի, Մա-
թուսաղայ զպրիս, Սեբաստիան յետոյ որ
յետոյ եղեւ շնորհին Աստուծոյ արքեպիս-
կոպոս եւ առաջնորդ լուսաբերանից (?)
սրբոց Հրեշտակապետաց մենաստանին
ՌՃԷ. որ յաւուրս նորա եղեւ նորոգումն
համանգամայն ներքոյ եւ արտաքոյ չքնազ
եւ զարմանալի, սրբատաշ եւ կրաշաղայ,
կամարակալ տաճարօք եւ կմբեթայարկ բար-
ձրահայեաց խորանօք եւ սպահով զարպա-
սիւք բաղմօք, որ ոչ զոյր յառաջ, ի թուին
ՌՃՀԷ» (Սիւրմէեան, Յուց. հայ. Ձեռ. Հա-
լէպի, Բ., էջ 42):

Թէպէտ այս շինարարական գործունէու-
թիւնը Աստուածատուրի կը վերագրուի, սա-

¹¹ Հմմտ. աստ. ծն. 8:

կայն իրականին անոր որդւոյն Եղիազար ա-
ռաջնորդ վարդապետին է, որ հօրը ծերու-
թեան ատեն սկսած է եւ ապա աւարտած:
Եղիազարի մասին Յովհաննէս Սեբաստացին
կը գրէ՝ «ի սոյն ժամանակի նստէր ի վանս
սուրբ Հրեշտակապետի ուրոյն առաջնորդու-
թեամբ Սեբաստացի Աստուածատուրի վար-
դապետի որդի Եղիազար վարդապետն՝ այր
վիհաննէս եւ ձոռոմբան, սա ի նախանձ
բարի շարժեալ եւ խորհրդակցութեամբ
Առաքել եպիսկոպոսի ետ բերել զհրամանա-
լիւր յարքունուստ եւ սկսաւ շինել զվանս
սուրբ Հրեշտակապետի Յունիս 3 եւ նորո-
գեաց զգմբէթ, զտանիսն եւ զորմունան,
սպիտակացոյց եւ զմէջն եւ կանգնեաց զեր-
կուս սեղան յաջմէ եւ յահեկէ, որ ոչ գոյր,
շինեաց եւ ժամատունս եւ անտեստունս եւ
առանձին սենեակս բոլոր միաբանից եւ ուխ-
տաւորաց եւ տեղիք անասնոց եւ ծածկ կե-
րակրոց եւ ի լրման ամին 1731 կատարեցաւ
չինուածք ամենայն» (Դիւան, Ժ., էջ 412):
Բնական էր որ այսքան նորոգութիւններու
համար դրամ հարկաւոր ըլլար: Թէեւ քա-
ղաքացիներն ու շրջակայքի վիւղացիութիւնն
իրենց նիւթական օժանդակութիւնը չեն դա-
նար, սակայն վանքը պարտքի տակ կը մնայ,
բայց Եղիազար աննկուն է, անցնելով Կ. Պո-
լիս կը յաջողի ոչ թէ՛ միայն պարտքերը
վճարել, այլ եւ «բազում ոսկեղէն եւ արծա-
թեղէն զարդուք եւ յիշատակօք զարձաւ եւ
եկն ի վանս իւր» (Դիւան, Ժ., էջ 412—413):
Եղիազար վերջէն Ս. Նշանի առաջնորդ կ'ըն-
տրուի եւ «եզ ի տեղի իւրում ի վանս սուրբ
Հրեշտակապետի զթոռն իւր զԱստուածա-
տուր վարդապետ» (Դիւան, Ժ., էջ 417):

Ապա Յակոբ Արմատանցին յատուկէն կը
նշանակուի նաեւ առաջնորդ Ս. Հրեշտակա-
պետի եւ նա՝ «նորոգեաց զվանս Ս. Հրեշտա-
կապետի, զարտաքին պարիսպն մեծ սրահին
եւ զերկու կարգ ուխտաւորաց՝ 19 սենեկօք
բոլորովիմբ եւ ի ներքոյ նոցին զտեղիս ա-
նասնոց եւ երկվիցկեան զրան կողմի պա-
րիսպն բոլոր վտեալ եւ խախտեալ տեղիսն
մենաստանին նորոգեաց՝ իբրեւ երեսուն
քսակ զրամս ծախելով ի նմա» (Դիւան, Ժ.,
էջ 421):

Այս շրջանէն սկսած Հրեշտակապետի
վանքը Ս. Նշանի կամ Սեբաստիայի առաջ-
նորդին իրաւասութեան կ'ենթարկուի (Դի-
ւան, Ժ., էջ 421):

Գուցէ Արդ եպիսկոպոս Եկնիչհերցին



ժամանակ մը վանահայրութիւն ըրած ըլլայ նաեւ Հրեշտակապետի վանքին, ուր 1782ին Յովնան Կիւրինցին քահանայ կը ձեռնադրէ (Հմմտ. Աղեքսանդրեան, Պատմութիւն ակա- նաւոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետիկ 1911, էջ 324 եւ Հանդ. Ամս., 1914, էջ 594):

1809ին կը յիշուի՝ «Սուրբ Հրեշտակա- պետի ուխտը Յարութիւն վարդապետ» (Դի- ւան, Ժ., էջ 429):

1887ին փոխ վանահայր եղած է Մովսէս վարդապետ, որ թէեւ վանքին վերանորոգու- թեան եւ ծաղկումին համար ջանք չէ խնայած է, սակայն չորսքէ զրկուած է եւ թաղուած Ս. Թաղաւոր վանքի մէջ (Պալեան, Հայ Վա- նորայք, Ա., էջ 118):

Սուրբ Հրեշտակապետի վանքը սիրուած ուխտատեղի եղած է (Համբարձումեան, Գիւղաշխարհ, Պարիս 1927, էջ 57—59) եւ ունեցած է ու տրամադրութիւն ըրած շատ մը կալուածներու վրայ: Նաեւ հարուստ եղած է եկեղեցական անօթներով, զգեստնե- րով, եւ ձեռագիր մատենաներով, որոնք սպա Ս. Նշան կը փոխադրուին (Նաթանեան, Տեղեկագիր Վիճ. Սեբ., էջ 63, Պալեան, Հայ Վանորայք, Ա., էջ 118, Հանդ. Ամս., 1923, էջ 69 եւ Նոր Այդ, 1913, էջ 123):

Իբրեւ վերջաբան յաւելունք որ՝ Պալեան կը կասկածի թէ՛ Հրեշտակապետի վանքը «ԺԲ. դարուն մէջ գուցէ կը կոչուէր Ս. Նի- կոլայոսի անապատ», սակայն 1176ին գրուած յիշատակարանէն (Հմմտ. վերը), որ նա իր աչքին առջեւ ունի, չէ կարելի այս եզրակա- ցութեան յանդիլ: Աւելի ճիշդ է թերեւս իր միւս վարկածը՝ «եւ կամ այս վանքի մօտերը կար ուրիշ վանք մըն ալ յանուն Ս. Նիկո- ղայոսի» (Պալեան, Հայ Վանորայք, Ա., էջ 119):

10.

Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔԸ

Սեբաստիայի Դաւրայ գիւղին ծայրը շի- նուած է Ս. Յակոբի վանքը: Այսպէս կո- չուած է, վասն զի իր գեղեցիկ տաճարը — օժտուած կաթողիկէով — նուիրուած է Ս. Յակոբի: Վանախաններու համար ժամանակ մը կային մէկ երկու սենեակ, որոնց վրայ ետքէն զեռ ուխտաւորներու համար կ'աւել- նան ուրիշ քանի մը սենեակներ եւ վանքը շրջապարիսպներու մէջ կ'առնուի:

Վանքին պատմութիւնը զժբախտաբար բոլորովին մոռ թ է եւ անոր յիշատակու-

թեանը որ եւ է հին դրութեան մը մէջ զեռ չենք հանդիպած:

Փնտռուած ուխտատեղի եղած է: Տօ- նախմբութեան օրն էր Ս. Գր. Լուսաւորչի նշխարներու գիւտի օրը (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Ա., էջ 164—165, Պալեան, Հայ Վանորայք, Ա., էջ 108—109, Բիւզանդիոն, 1900, Թ. 1264 եւ Նոր Այդ, 1913, էջ 121—122):

11.

Ս. ՅՈՎՃԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԸ

Սեբաստիայի Հողդար թաղին մօտ ա- պուստի մը վրայ կը բարձրանայ չենք մը, որուն մասին կ'աւանդուի թէ՛ երբեմն վանք կամ եկեղեցի եղած ըլլայ — յանուն Ս. Յով- հաննէսի — եւ յետոյ մղկիթի վերածուած ու կոչուած Ապղլ-վահայ-ղաղի (Սրուանձ- տեանց, Թորոս Աղբար, Ա., էջ 157 եւ Պա- լեան, Հայ Վանորայք, Ա., էջ 111—112, եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1001. Հմմտ. եւ Ս. Նշանի վանքը ծն. 24):

12.

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔԸ

«Գրեցաւ աստուածատու մատենաս Աւետարանի ի Սեբաստիա յամի ՈՒԷ (1176) ի լերինս Աղտից ի դաշտահայեաց անապա- տիս, յանուն հայրապետին Նիկոլայոսի ձե- ոամբ Կոստանդեայ մեղսարի եւ անպիտան կրանաւորի...» (Բիւզ., 1907, Թ. 3159. Հմմտ. Ս. Հրեշտակապետի վանքը):

13.

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Սեբաստիայի հիւսիսային կողմը, Մէրէ- դոմ կամ Մայրադոմ լեռան միջին բարձրկին ստորոտը, լայնատարած սարաւանդի վրայ բարձրացեր է Ս. Նշանի հուշակաւոր վանքը, որ նմանապէս Արեգակ Ս. Նշան կոչուած է¹²

¹² Ս. Նշանի վանքի եւ անոր առաջնորդներու, նաեւ Սեբաստիայի միւս վանքերու համար շատ կարեւոր նիւթեր եւ տաղձներ պահուած էին այն վանքի Մա- աննադարանին Ձեռագիրներու մէջ, որոնց ցուցակա- գրութեան մաս մը արդէն Հանդէս Ամսօրեայի մէջ (1924, 1925 եւն) հրատարակուած է եւ միւս մասը այսօր կը գտնուի Երուսաղէմ: Այդ Ձեռագիրներէն՝ ա. Թ. 233 (հին) = 260 (նոր) է՝ «Վարք եւ Պատմու- թիւն Առաքել վարդապետի, առաջնորդին Սեբաստիոյ» (1722—1747), բ. Թ. 234 = 179՝ «Օրագրութիւն Գրի- դոր արքեպ. Գաղատացոյ, առաջնորդին Հայոց Սե- բաստիոյ», գ. Թ. 235 = 283 «Պատմութիւն Ս. Նշանի

(Բիւզանդիոն, 1900, Թ. 1264. Նոր Այդ, 1912, էջ 82): Ունի 350 քայլ շրջապատ եւ երկու դուռ: Դէպի հարաւ կը բացուի ա- նոնցմէ մին: Անոր փեղկերը թանձր փայտէ շինուած են ու երկաթով պատուած: Ունի հաստատուն քարէ դօրաւոր սեմեր եւ այս դռնէն ժողովուրդը կը մտնէ ու կ'ելլէ: Այս դրան կից — ներքին կողմէ՝ դէմ առ դէմ կան ընդարձակ նստարաններ, որոնք ուխտա- ւորներու առաջին թաղին ճամբուն վրայ հաստատուած են: Քայլ մը անդին կայ մի- ջակ եւ քարաչէն բակ մը, որ առաջնորդա- րանը կը հանէ: Բակը շրջապատուած է պա- սով մը, որուն ձախ կողմը կը գտնուի աղ- բիւր մը: Ասոր կից է փայտէ հին դուռ մը եւ անոր քով ուխտաւորներու երկրորդ թաղը: Այս երկու թաղերն ունին փայտաչէն սենեակներ եւ ընդարձակ ճաշարան ու լուս- ցարան: Վերջինս երբեմն խոհանոց եղած է: Առաջնորդարանին պատին աջ կողմն է փայ- տաչէն երկրորդ դուռը, որմէ կարելի է մտնել Առաջնորդարանն ու միաբաններու մասը կամ թաղը:

Վերոյիշեալ բակին աջ կողմն է եկեղեց- ոյ դաւիթին առաջին փայտեայ դուռը, որմէ վերջ կու գայ անոր երկաթեայ դուռը: Գա- լիթը մեծ է եւ ընդարձակ. քսանուերկու ոտք երկայն եւ յիսունուերկու ոտք լայն: Սա- լայատակուած է եւ պատերը կլրով սպիտա- կացուած: Գաւիթը իր փայտեայ զմբէթին վրայ բացուած ինը լուսամուտներէ լոյս կ'ընդունի: Սոյն գաւիթին արեւելեան կողմը — Ս. Նշան եկեղեցոյ դրան աջ կողմը — հարաւային պատին առջեւ կան գերեզման- ներ, որոնց մէջ ամփոփուած են քանի մը եպիսկոպոսներ ու վարդապետներ:

Գաւիթին արեւելեան կողմը՝ իրարու մերձ շինուած են երեք եկեղեցիներ՝ Ս. Նշան, Ս. Կարապետ եւ Ս. Աստուածածին:

Ս. Նշանի երկարութիւնն է 74 ոտք եւ լայնութիւնը՝ 41 ոտք: Աւագ խորանը բարձր է եւ ոսկեղօծ ընտիր պատկերներով զարդա- րուն: Ընդարձակ է բեմը եւ փառաւոր սե- ղանը, որ աջ ու ձախ կողմերը պատկերա-

եւ առաջնորդաց Սեբաստիոյ», գ. Թ. 236 = 262՝ «Յովհ. եպ. ի Պատմութիւն առաջնորդաց Սեբաս- տիոյ», ե. Թ. 237 = 264, «Պատմարանութիւն Ս. Նշանի վանոց եւ միաբանութեան, 18-2, Վառձապուհ քհ. Գիւղարանէ գրուած գ.—ք. Թ. 238 = 272ա, Թ. 239 = 272բ, Թ. 240 = 273, Թ. 241 = 274 Ձեռագիրները՝ յանկեր, ցուցակներ են Ս. Նշանի եւ Սեբաստիոյ քա- հաններու եւ ծախի (եւ հաշուեղիբը): Հմմտ. վարք:

դարը խաչկալներով դռներ ունի — օժուած Ս. Գր. Լուսաւորչի եւ Ս. Յակոբի անուն- ներովը: Սեղանին ճակատը կը կարգացուի՝

«(Ի) ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՋ ԴԻՏՈՂԻ ՏԵԱՌՆ ՅՈՎ- ՃԱՆՈՒ ԱՐՉԻԱՊԵՏԻ, ԱՐԻԵԱՄԲ ԲՈՂՈՐ ՀԱՅԿԵԱՆ ԱԶԳԻՍ, ՄԵՆ ԵՒ ՇԻՆՈՒՄՆ ԽԱԶԿԱԼԻ, ԶՔՆԱՂԱՓԱՅԼ ԵՒ ՊԱՆԾԱԼԻ, ՆՈՐԻՆ ԽՈՂԵՄ ՓՈԽԱՆՈՐԻԻ, ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ... ԹԻՒ ՀԱՅՈՅ» (եղծուած):

Դասերուն վրայ կը նայի հոյակապ զմբէթն իր քանի մը լուսամուտներովը: Սոյն դասերուն մէջ կան զոյգ մատուներ՝ նուր- րուած Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն, իսկ դրան մօտ շինուած են երկու խորան՝ ընծայուած Ս. Կարապետի եւ Գլխաղբի:

Ս. Նշան ճարտարապետական յաջող գործ է եւ նման Վարագի Ս. Նշանին, բայց անկէ փոքր: Իր ներքին պատերը կէսէն վար կուտինայի հին յախճապակիներով զարդա- րուած են, իսկ կէսէն վեր այլեւայլ սուրբե- րու պատկերներով զարդարուն¹³:

Երկրորդ եկեղեցին է Ս. Կարապետ, որ աւանդութեան համաձայն կանխապէս Ս. Գր. Լուսաւորչէն իբրեւ մատու շինուած է եւ ետքէն ընդարձակուած ու եկեղեցոյ վերա- ծուած¹⁴: Ունի 92 ոտք երկարութիւն եւ 32 ոտք լայնութիւն: Գմբէթը բարձր է ու քարուկիրէ կերտուած եւ բոլորաձեւ պատու- հաններով օժտուած:

Ս. Կարապետի եկեղեցին Կարապետ արք- եպիսկոպոսը վերանորոգած է:

Երրորդ եկեղեցին թէեւ փոքրիկ է, բայց շատ սիրուն եւ ընծայուած Ս. Աստուա- ծածնի: 33 ոտք երկար եւ 16 ոտք լայն, շի- նուած ծակոտկէն թեթեւ քարերով. սեղանը համակ մարմարեայ: Ունի երկու մատու ձօնուած՝ Քառասուն մանկանց եւ Ս. Գէորգի: Այս տեղ թաղուած կ'աւանդուի՝ Պետրոս Գե- տաղարձը: Հոս ամփոփուած է նաեւ Անա- նիա կաթողիկոս, որուն տապանաքարին վրայ գրուած է՝

«ՅԱՅՍ ՏԱՊԱՆԻՍ, ԵԳԻՆ ԶՄԱՐՄԻՆ, ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱ, ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ, ՈՐ ՕԾԵԱԼ ՆՍՍԱԻ, ՎԵՀԱՊԵՏ ԱԶԳԻՍ, Ի ԳԵՐԱՀՌԶԱԿ, ՍՈՒՐԲ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ, ՍԱ ԵՐ ԱԶԳԱԿԱՆ, ՊԵՏՐՈՍ ՄԵՇԻՆ, ԳԵՐԱԳԱՐՁ ԿՈՉԵԱԼ, ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԺԱՄԱՆԵԱՅ ՎԱՆՃԱՆ, ՍՈՒՐԲ ԿԵՆԱՅ ՆՈՐԻՆ, ԹՈՒԻՆ ՎԵՅ ՀԱՐԻՐ, ՅԻՍՈՒՆ ԵՒ ՎԵՑԻՆ»:

¹³ Նկարողներն եցած են՝ Գիւրգէի Յարութիւնի որդիներն Նախճի Գալուստ (1840) եւ Պօղոս (Նոր Այդ, 1913, Թ. 5, էջ 96):

¹⁴ Ս. Կարապետի ճարտարապետն եւ մարմարեայ սեղաններուն եւ ուրիշ քանակներու քանդակագործն եղած է Թաշճի Յահան Տէվլճեան Սեբաստիայի († 1863, Նոր Այդ, 1913, էջ 97, ծն. 1):

Այս եկեղեցւոյն մէջ պահուած է նաեւ Ս. Գոհարինէի որդւոյն Ս. Թէոդորոս արեղայի աճիւնը, որ Հ. Ինճիճեանի տեղեկութեան համաձայն իր որով Ս. Կարապետի մէջ կը գտնուէր (Նոր Հայաստան, էջ 287): Տախտակի մը վրայ գրուած է՝

(ՆԵՐՔՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՔԵՆՈՒՈՐՈՍԻ ՎԿԱՅԻՆ). «ՔԵՆՈՒՈՐՈՍ ԱՅՍ ՍՈՒՐԲ ԳՈՀԱՐԻՆԵԱՅ ՎԿԱՅԻ ՈՐԴԻ, ԷՐ ՏԵՍԼԱՄԲ ԶԲՆԱՂ ԱՆՁԱՄԲ ՓԱՌԱՅԻ ՔԱՋ ԱՌԱՔԻՆԻ, ՈՐ ԲԱԶՄՕՔ ԱՄՕՔ ԱՂՕԹԻՒՔ ՊԱՂՕՔ ԽԱԶԱԿՅԻՐ ՓՐԿՁԻՆ, ԴԱՌՆԱՇԵԱՏ ԶԳԱՄԲ ԿԱՅՐ Ի ՄԵՆԱՍՏԱՆ ՍՐԲՈՅ ՆՇԱՆԻՆ, ՈՐՈՅ ԶԸՄԲՈՆԵԼ Ի ՍԱԿՍ ՀԱՒԱՏՈՅ ՊԻՂԾ ԱՓԱՅԻՆ ԲԱՄԻՐ ԱՐՈՒԹԵԱՄԲ ԶՇՄԱՐԻՑ ՎԿԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՆԻՆ, ՈՐ ՄԱՆԻՒՐ ՔԱՆԻՅՍ ԴԺՆԵԱՅ ԿՏՏԱՆԱՅ ԿԱՐԻ ՍԱՍԿԱԳԻՆ ՍՐՈՎ ՅՕՇԱՏԻՐ Ի ՄԱՍՈՒՆՍ ՅԵՐԻՍ ՍՈՒՐԲ ԱՆՁՆ ՆՈՐԻՆ, ԱՃԱՊԱՐ ԶՈՒԷՐ ՍՐԲԱԿՐՕՆ ՀՈԳԻՆ ԿԱՅԱՆՍ ՅԵՐԿՆԱՅԻՆ, ԲԱ ԱՆԴԵՆ ՓԱՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՎԱՐ ՎԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԵԳԵԱԿ ԴԱՄԲԱՆԻ ՅԵԿԵՂԵՅԻՈՋ Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ ՂԱՄԲԱՐԱՃԱՃԱՆՁ ՇՆՈՐԷՔ ԶՐԱՇԻՑ ՄԻՇՏ ԱՐՏԱՓԱՅԻՆ ԱՐԴ ՓՈՒՍԴՐԻ Ի ՇԳԵՂ ՇԻՐԻՄ Ի ՏԱՃԱՐ ԿՈՒՍԻՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴԻՏԵ, ԿԱՐԱՊԵՏ ՊԵՏԵ ԳՈՐԾԱԿԻՅ ՆՈՐԻՆ ՆԱՀԱՍԱԿԵԱԿ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1150ԻՆ ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՐԱՅՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1827ԻՆ»:

Պետրոս Գետաղարձի¹⁵ աճիւնին վրայ ալ կայ սեւ տախտակի վրայ գրուած դամբանական մը՝

(ՆԵՐՔՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԳԱՐՁ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ). «ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԳԱՐՁ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԳԵՏԱԳԱՐՁ ՊԵՏՐՈՍ ՎԵՀՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԱՆ, ԵՐԿՈՒՆՍ ԶԳԱՆՅ ԵՒ ՎԻՇՏՍ ԱՆՁԱՆՅ, ԵՌԱՆԴԵԱՄԲ ԿՐԷ ՅԱՆՁԻՆ ԳԵՐԱԶԱՆՅ, ՏԱՏԱՆԵԱԿ ՇՐՁԻՐ ՏԵՂԻ Ի ՏԵՂԵԱՅ, ՏԱՅՐ ԱՐԳԵԼ ԳԵՏՈՅ ԶՈՐԻՅՆ ՀՈՍԱՆԱՅ, ԲԵՆԱՅԻՆ ԶՐԻՒՔ ԶԱԶԳ ՄԵՐ ԶԱՐԴԱՐԵՐ, ԱԶՆԻ ՊԵՐՁ ԵՐԳՈՎՔ ԶԲԱՆ ՄԵՆԱՐԵՐ, ՈՒՂՓԱՃԵՄ ԶՐԱՇԻՒՔ ԶԻՆԻՆ ՇՈՂՇՈՂԵՐ ԴՐՈՒԱԳ ԶՈՒ ԲԱՆՅ ՏԱԿ ՄՄԱ ԶԱՀՐԵՐ ՍԵՐԱԿ ԶԿԵԱՆՍ ԱՍՏԵՆ ՎՃԱՐԵՐ. ԱՃԱՊԱՐ ՅԵՐԿԻՅ ԿԱՅԱՆ ԶՈՒԷՐ,

¹⁵ Պետրոս Գետաղարձի գերեզմանը վարագրի մէջ կա կը ցուցուի (Հմմտ. Ոսկեան Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս, էջ 273), բայց շատ աւելի հաւանական է թէ՛ սոյն կաթողիկոսը Սերաստիայի Ս. Նշանի մէջ թաղուած ըլլայ (Հմմտ. Արարատ, 1897, էջ 12-23):

ՍԱՀԵՐ ՔԱՌԱՎՏԱԿ ԱՌԱՆՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ, ԲԱՄԻՐ ՍՈՒՐԲ ՄԱՐՄՆՈՎ Ի ՎԱՅՐՍ ՀԱՆԳՐՍԵԱՆ. ԱՐԴ ՓՈՒՍԴՐԻ ՅԱՅՍ ԶԲՆԱՂ ԴԱՄԲԱՆ. ԶԵԶ ԼԻՆԻ ՄԻՋՆՈՐԴ ԱՌ ՏԵՐ ԱՆՆԱՓԱՆ. ՎԱՆՁԱՆԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1058. ՓՈՒՍԴՐԵՆ ԶՍՈՒՐԲ ՆՇԱՐԱՅ ՆՈՐԻՆ ՅԱՄԻ 1827»:

Միաբաններու եւ ուխտաւորներու սենեակները դէշ չեն, սակայն բնականաբար աւելի վայելուչ ու ներկայանալի են Առաջնորդարանի սենեակները (Նաթանեան Պօղոս Վ., Տեղեկազր ընդհանուր վիճակին Սերաստիայ, Կ. Պոլիս 1877, էջ 37-61, Սարգիսեան Հ. Բ., Տեղադրութիւնը, էջ 64, Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Ա., էջ 138, 176-179, Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, էջ 287, Թորոսեան Հ. Յ., Վարք Մխիթարայ Արքայի Սերաստացւոյ, Վենետիկ 1901, էջ 55-56, Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 101-104, Հանդէս Ամսօրեայ, 1898, էջ 19 եւ Նոր Այդ, 1913, էջ 96-100):

Ս. Նշանի հիմնադիրն է Սենեքերիմ Արծրունի թաղաւորը, որ վարագայ Ս. Նշան վանքի պակասը դոնէ մասով մը լրացնելու գիտաւորութեամբ Սերաստիայի մէջ Ս. Նշանի վանքն ու եկեղեցին շինել կու տայ եւ հոն կը գետեղէ՝ «գտուրը Նշան, գտուրը Խաչն Վարագայ» (Նաթանեան, Տեղեկազր Սերաստ., էջ 27-28, Հանդէս Ամսօրեայ, 1940, էջ 217 ծն.): Սակայն այնպէս կը թուի թէ՛ դաղթական արքայն իր հիմնարկութեան աւարտումը մահուան հետեւանքով չի վայելի եւ զայն տեսնելու բախտը իր գաւազններուն կը վիճակուի: Այսպէս ստիպուած եմ՝ խորհիլ Յայտաւորքի վկայութիւնն եւ Վարդանի խօսքերն իրարու համաձայնեցնելու Լանքով: Յայտաւորքի մէջ կը կարդանք՝ «Եւ ի վաղն Սենեքերիմայ տարաւ ընդ իւր գտուրը Նշան Վարագայ: Եւ անդ շինեաց զվանք սուրբ Նշանին եւ անդ եզին գտուրը Նշան, վասն որոյ եւ սուրբ Նշանի վանք կոչեցաւ անուն վանացն» (Տաշեան Հ. Յ., Մայր ցուց. Վիենն., էջ 100, Հանդ. Ամս., 1940, էջ 218): Իսկ Վարդան Արեւելցի պատմագիրը կ'աւանդէ՝ «Առ սայ գնայ տէր Պետրոս եւ գտնայ ի Սեւաստ եւ որդիքն Սենեքերիմայ տան նմա զվանքն, որ յանուն Վարագայ սուրբ Նշանին շինեալ էին, ընդ ինքեանս ունելով զխաչն» (Հաւաքումն պատմութեան, Վենետիկ 1862, էջ 98):

Սենեքերիմ, որ իր նախնիներու հոյակապ

ու հարուստ ժառանգութիւնը՝ Վասպուրական աշխարհը Յոյներու թողուցած (Հանդ. Ամս., 1940, էջ 217-218) եւ անոր փոխարէն Սերաստեան ստացած էր, իր նոր հայրենիքին չի կապուիր, դուրջ նոյն իսկ հասկնալով իր սխալը, բայց այլ եւս անսրբազրելի:

Նա կը կտակէ իր մարմնոյն եւ Ս. Նշանի փոխադրութիւնը վարագրի մէջ (Մթատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկուա 1856, էջ 32, Հանդ. Ամս., 1940, էջ 218, Արարատ, 1877, էջ 442): Հայրասէր որդիները — Դաւիթ եւ Ատոմ — Սենեքերիմի կտակն ու բաղձանքը կը կատարեն եւ իրենց հօր մարմինը եւ Ս. Խաչի մասունքը Վասպուրական կը տարուին: Բայց Ս. Խաչի մասունքէն մաս մը Ս. Նշան վանքի մէջ կը գետեղուի իբրեւ պահպան նոր հայրենիքի եւ յուշարար հին հայրենիքի (Դիւան, Ժ., էջ 383, Տաշեան, Մայր Յուցակ, էջ 100, Նաթանեան, Տեղ. Վիճ. Սեր., էջ 29. Հմմտ. նաեւ Սիմէոն Ղարի Լեհացւոյ Ուղեգրութիւն, հրտ. Հ. Ն. Ալի-նեան, Վիեննա, 1936, էջ 189):

Ս. Նշանի հիմնարկութեան¹⁶ տարին չէ կարելի ստուգապէս նշանակել, հաւանաւորէն շինուած ըլլալու է 1025-1030ի շրջաններուն, վասն զի սկիզբը Սենեքերիմ կ'ընէ¹⁷, բայց նա անոր օժուած տեսնելու բախտաւորութիւնը չ'ունենար: Յովհաննէս Սերաստացին 1021ին կը համարի հիմնարկութիւնը, որ ճիշդ չէ (Հմմտ. վարը):

Ս. Նշանի հիմնարկութեան եւ անոր առաջնորդներուն եւ վանքին այլ եւ այլ դարերու մէջ ունեցած վիճակին մասին ունինք բաւական շատ տեղեկութիւններ եւ զանոնք մեծ մասով կը պարտինք Յովհաննէս Սերաստացիին¹⁸, որ իբրեւ վանահայր Ս. Նշանի եւ առաջնորդ Սերաստիայի՝ իր առջեւ բաց ունենալով Ս. Նշանի եւ ուրիշ շատ մը հաստատութիւններու գիւանները, մատենադարաններն ու դրքերը կրցեր է կարելուր նկատած նիւթերը հաւաքել եւ մեղի թողուլ զանոնք: Գրութեան խորագիրն է՝ «Պատմութիւն վիճակին Սերաստիայ»: Ծանօթանանք բովանդակութեան հեղինակը ունիղրելով, բայց

¹⁶ Աւանդութիւնը Գր. Լուսաւորիչը Սերաստիայի առաջնորդութեան եւ Ս. Նշանի հիմնադիրը կը ճանչնայ (Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 101, Դիւան, Ժ., էջ 383, Նոր Այդ, 1918, էջ 82-83):
¹⁷ Հմմտ. նաեւ Հանդ. Ամսօրեայ, 1925, էջ 574:
¹⁸ Հմմտ. Դիւան, Ժ., էջ 5Ա եւ ԵԲ: — Ծանօթ է համանուն Յովհաննէս Սերաստացի մը՝ «աթոնակալ հիւսիսային կողմանց», որ ապրած ու գործած է Ժ. Գ. դարուն:

նախ զնենք ծաւալուն եւ յաւելեալ խորագրերը՝ «Պատմութիւն վիճակին Սերաստիայ: Յաղագս երեւելի ինչ ինչ անցիցն, որք անցին ընդ հրաշափառ վանս, որ յանուն արփիափայլ Ս. Նշանի կառուցեալ կայ ի Մայրաքաղաք Սերաստիա, սկսեալ ի հիմնարկութենէ եւ ի շինութենէ անտի սրբոյ Մեհաստանիս ի Յովհաննէս այսինքն Սենեքերիմ բարեպաշտ արքայի Արծրունեաց: Յամի Տեառն 1021: Եւ Հայոց Թիւ Ն. Հ.:

Հաւաքեալ եւ ի մի վայր գումարեալ ի պատմադրաց՝ աստի եւ անտի՝ ի հին եւ ի նոր գրուածոց ի գաւազանադրոց, ի կոնդակաց, ի տապանադրաց, ի յիշատակարանաց, դրեանց խաչից, դարդուց եւ այլոց կահուց եւ կարասեաց:

Յօրինեալ ի Յովհաննէս արքեպիսկոպոսէ Առաջնորդէ Սերաստիայ Յամի Տեառն 1830 եւ ի թուին Հայոց ՌՄ ՀԹ:

Կրկին գրեցեալ եղեւ (ձեռամբ) մեղսամած եւ յամենից յետնեալ տէր Մեսրոպ միայն անուամբ քահանայի ընդ հովանեաւ ամենամաքուր սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյ Մայր վարժարանի Սերաստիայ» (Նաթանեան, Տեղ. Վիճ. Սեր., էջ 24):

«Նախարանութիւն դոյզն ինչ: Որպէս ոչ ոք կարէ երկիցս թանալ զոտս իւր ի միեւնոյն ջուր գետոյն՝ զոր փութապէս հասեալ ի բաց անցանէ, որպէս վիճակ կենցաղոյս ի վայրկեան մի կարէ կեալ ի նոյնութիւն, յար եւ միշտ ի բաղձաց զիմի փոփոխութիւնս եւ այլալուծութիւնս առեալ իբրեւ թէ կոհակս ալեաց էլ եւ էջս առնէ, երբեմն երջանիկ յաջողութիւն անորը խաղաղութեամբ զուարճանալով ցնծացեալ ձեմս առնէ, եւ երբեմն վնասակար ձախորդութեամբ աղմկալի խռովութեամբ վրդովեալ սաստկազոյն տատանի:

Որպէս եւ յարկ փառացն Աստուծոյ սուրբ տաճարս այս գերապանծ, որ յանուն հրաշափերտ սուրբ Նշանի կառուցեալ կայ ի մայրաքաղաք Սերաստիայ, զոր մերթապէս հոյեւոր եւ մարմնաւոր վայելչութեամբ զարգարեալ անճառահարչ սքանչելիօք, երեւելի եւ փառաւոր հայրապետօք, ներհուն եւ բանիբուն վարդապետօք, հոշակաւոր ազնիւ նահատակօք, անուանի եւ մեծագործ թաղաւորօք եւ իշխանօք, շքեղապարզ գեղեցկապէս հոյակապ յօրինուածովք եւ պէսպէս պանծալի ճրիւք պճնեալ պերճանայր եւ մերթ յողնաղիմի վտանգալիլ եւ վնասակար զի

պրեզիդենտը շուրջ փակեալ վայրենամիտ եւ կա-
մակոր արանց այլազգեաց պաշարեալ ա-
րիւնառուչտ դժնդակ եւ դազանարարոյ
բռնաւորաց կեղեքեալ ի յետին տնանկութիւն
եւ անշքութիւն զրեթէ յամայութեան վիճակ
ժամանեալ վերելիւր, է այսմ ամէ ամենա-
խնամ աջ հզորին հովանեաւ տեսչութեամբ
արգահատեալ պաշտպանեաց զսա մինչեւ
ցայժմ եւ սա պահեսցէ հաստատուն մինչեւ
ցյալիտեան:

Ձսոցանէ սակաւ ինչ ունիմբ խօսիլ ա-
ռաջիկայդ համառօտակի հաւաքեալ ի պատ-
մութեանց աստի եւ անտի, ըստ որում
ճշմարիտ պատմութիւն ոչինչ է առանց ժա-
մանակագրութեանց. վասն որոյ յաւելուք եւ
Բ. Պատ. Որեք. զթուականս ի լուսանցն ընդ
որս եւ զստուգութիւնն սրբոյ մենաստանիս
եղաք յաւարտ պատմութեանս, խօսեցաք
սակաւ ինչ եւ վասն աստուածընկալ սրբոյ
նշանացն եւ մեծագոր նշխարաց սրբոցն, որ
ի կամս գետեղեալ կան ի զրօսանս Գերապա-
տիւ բանասիրացդ, որ ի սակս ձեր բազմա-
ցելոցդ:

Մնամ միշտ ազօթարար եւ պաշտօնարար
Առաջնորդ Սերաստիոյ
Յօհաննէս Արքեպիսկոպոս»:

Որագրէն եւ նախարանէն արդէն կա-
րելի է պայծառ գաղափար կազմել թէ՛ այս
զրութիւնը ի՛նչ արժէք ունի եւ ի՛նչպէս
պէտք է անոր մերձենալ: Ձայն այնքան նկա-
տողութեան պիտի առնունք՝ որքան անոր մէջ
Սերաստիայի առաջնորդները իբրեւ Ս. Նշանի
վանահայրներ յիշուած են, այս է սոյն ա-
ռաջնորդներուն Ս. Նշանի մասին եւ անոր
մէջ ունեցած գործունէութեան պատմու-
թիւնը: Յաւալի է, որ «Դիւան»-ի մէջ (Ժ. հա-
տոր, էջ 383) անոր ամբողջական հրատարա-
կութիւնը կարելի չէ եղած ընել եւ նախա-
նեանի հրատարակած կտորները կամ մասերն
իսկ լրտպէս (էջ 24—37) չեն տպուած: Նա-
խանեան նկատի ունեցած է նոյն գործին ամ-
բողջական հրատարակութեան առաւելու-
թիւնը եւ ուզած է զայն լրակատար ի լոյս
ընծայել, սակայն՝ «Վանուց արժ. միաբանա-
կից վարդապետք արգելին կատարել սրտիս
իզձը՝ չգիտեմ ի՛նչ պատճառաւ» (Տեղեկա-
զեր Ընդ. Վիճ. Սեր. , էջ 23):

Ս. Նշանի հիմնարկութեան ժամանակ
Սերաստիայի եպիսկոպոսն էր Սիոն, որ հա-
ւանականօրէն անոր հիմնարկէքի հանդիսա-

գիրը կ'ըլլայ եւ իւրովսան շինութեան կը
նպաստէ (Դիւան, Ժ., էջ 383 եւ հմմտ. Աստ-
ղիկ, Պոմ., էջ 202): Իսկ Ս. Նշանի օժումն
ու հանդիսական մուտքը վիճակուած պիտի
ըլլայ Գրիգոր Մագիստրոսի աշակերտին
Նդիսէի, որ եպիսկոպոսական ձեռնագրու-
թիւնը կը ստանայ Պետրոս Գետադարձ կա-
թողիկոսէն: Վերջինս ժամանակ մը հոն
սպրած է եւ զուցէ հոն ալ թաղուած ըլլայ
(հմմտ. վերը եւ Դիւան, Ժ., էջ 384 եւ 387,
Վարդան Արեւելցի, Պոմ., էջ 98, Սամ.
Անցի, Ժամանակագրութիւն, էջ 107, Գր.
Մագիստրոսի թղթերը, հրտ. Կ. Կոստա-
նեանց, Աղեքսանդրապօլ 1900, էջ 15, 105,
107, 304. հմմտ. վերը եւ աստ էջ 18):

Նդիսէի յաջորդն է Սաչատուր՝ «այր
խոհական եւ իմաստուն» որ 31 ամեայ գոր-
ծունէութենէ յետոյ կը մեռնի եւ «ամփոփե-
ցաւ ի վանս սրբոյն Նշանի» (Դիւան, Ժ.,
էջ 385):

Սաչատուրի յաջորդներուն՝ Յովսէփ եւ
Դաւիթ արքեպիսկոպոսներու¹⁹ Ս. Նշանի
նկատմամբ ունեցած գործունէութեան մա-
սին տեղեակ չենք: Անոնց յաջորդին՝ Գրի-
գորի մասին գիտենք թէ՛ «Նստաւ ի վանս
սուրբ Նշանի ամս իբրեւ 31 եւ հասեալ ի
պարարտ ծերութեան հանգեաւ ի Քրիստոս
եւ թաղեցաւ ի վանս՝ ի գերեզմանատանն
հուպ շիրմի Պետրոսի Գետադարձին ՌժԺ»
(Դիւան, Ժ., էջ 386, ուր կ'աւանդուի թէ
հոն թաղուած ըլլայ նաեւ Յովսէփ):

Գրիգորի յաջորդութեան կը կոչուի Պսակ
կամ Սահակ՝ «այր խորհրդական եւ պար-
կեշտ ի վարս», որ Հոռոմկլայի ժողովին կը
մասնակցի (Ընդհ. Թուղթ Ներսէս Ծնոր-
հալոյ, Վենետիկ, էջ 199) եւ կը թաղուի
«ի մենաստանն Սերաստիոյ ի թուականու-
թեան ՈԼԵ եւ յամի Տեառն 1186» (Դիւան,
Ժ., էջ 386—387): Պսակի օրով, 1173ին Պօ-
ղոսի թղթերը կը գրուին: Անոր յիշատակա-
գրութեան մէջ կայ նաեւ՝ «փառապաշտեալ եղեւ
սրբասէր վարդապետն Գրիգորէս եւ սիրելի
եղբայր նորին Սաչիկ, պատուական քահա-
նայք եւ եղբարորդիք սրբազան եպիսկո-

¹⁹ Այս ժամանակները (1155) տեղի կ'ունենայ
Գոհարինեաց նահատակութիւնը (Գոհարինէի եղբայրը՝
Ռատիոս Ս. Նշանի մէջ կրօնաւորած է): Բարսեղ վար-
դապետը, որ Պալեստին համաձայն Ս. Նշանի առաջ-
նորդներէն է, անոնց նշխարները սոյն վանքին մէջ
կ'ամփոփէ: Աճառեան Հ., Հայոց Նոր Վիպերը,
էջ 4—11, 12—22, Պալեստին, Հայ Վանորայք, Ա.,
էջ 105, Ալիշան, Ն. Ծնորհալի եւ Պարապետի, Վե-
նետիկ 1873, էջ 235—236):

պոսի Տեառն Գրիգորի Սերաստիոյ նահան-
գին առաջնորդի եւ սուրբ Նշանին սպասա-
ւորի» (Արձագանք, 1883, էջ 670, Արարատ,
1910, էջ 535):

Պսակի գահը կը բարձրանայ Անանիա՝
«այր երեւելի եւ վեհանձն» որ կաթողիկոս
կ'ընտրուի (Կիր. Գանձ. Պոմ., էջ 70 եւ 76)
եւ 1207ին կը մեռնի: Անոր մասին կը հաղոր-
դուի՝ «Անանիա կաթողիկոսն եկն ի Սերաս-
տիա եւ նստաւ ի տեղի իւրում ի վանս
Ս. Նշանի, այլ եւս ամս իբրեւ երիս, հան-
գեաւ ի Քրիստոս եւ եղաւ մեծ պատուով ի
շիրմի հարաւակողմն մենաստանիս արտաքոյ
մեծի եկեղեցւոյն հուպ ի յորմն առաջի փա-
կեալ դրանն եւ պատուի (յ)երթեւեկաց դամ-
բարան նորին մինչեւ ցայսօր ժամանակի
ՈՄԶ, 1207, եւ յետ իբր 618 ամաց յաւուրս
տեսուչ Յօհաննէս եպիսկոպոս Սերաստաց-
ւոյ շինեցաւ ի վերայ նորա վայելուչ շիրմ
արդեամբ Բիւլէքճեան պարոն Յօհաննէսի
ՌՄԶԴ 1825» (Դիւան, Ժ., էջ 389—390, շի-
րմնագիրը տեսնել վերը):

Անանիայի յաջորդն է Գրիգոր: Անոր
մասին կան հետեւեալ յիշատակագրութիւն-
ները: «Փառք... Յամի ՈԿ թուականիս
(1211) եղեւ աւարտ աստուածեան մատենիս
սուրբ Աւետարանիս ի խնդրոյ հաւր Յով-
հաննիսի եւ Բարսղի վանաց վանականի...
եղեւ այր մի իմաստուն... Յեւանէս անուն
եւ պարոն Սեքան (ի լուսանցս՝ Պատրոն
Սարգիս) եւ Պապքան... կամ եղեւ նոցա ա-
մենայն հոգեւոր սիրով կատարել, զոր ինչ
պիտոյ է սուրբ աւետարանիս եւ տուեալ
յոսկւոյ եւ յարծաթոյ իւրեանց, կատարեցաւ
մինչեւ ի վերջին գիծն:

Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ
Հայրապետի նուաստի քահանայի ըստ աշ-
խարհի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին
եւ սուրբ Սարգսի զաւարմարին, որ յանուն
սոցա կանգնեցաւ սուրբ եկեղեցիս ի քաղա-
քիս Սերաստիա:

Արդ ի հայրապետութեան, ոչ գիտեմ ա-
սել, եթէ զու՞մ գրեցից անուն... այլ ասեմ թէ՛
երկց հակառակաց տէր Յովհաննիսի, տէր
Անանիէի եւ տէր Դաւթի: Իսկ ի մերում գի-
տապետութեանս տէր Գրիգորի, սուրբ եւ
ընտրեալ եպիսկոպոսի, որ է հրեշտակ ի
մարմնի եւ զարմ մեծի եւ հռչակաւոր վար-
դապետի, որ յաւուրսն իւր իբրեւ զարեգակն
ճատապայթեաց յաշխարհս մեր:

Արդ գրեցաւ սա (տարբեր գրով տողին

վրայ՝ սուրբ Փրկչին եւ) սուրբ Աստուածա-
նին եւ սուրբ Գրիգորի Լուսաւորչին, որ կոչի
վանք Փուրընդայի ի հայրապետութիւն Գրի-
գորի...» (Ալիքեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ.
էջմ. 987, հմմտ. Յովսէփեան, Քարտէս Հայ
հնգր., էջ 32):

Աստուածատուր 1239ին «յեպիսկոպո-
սութեան մեծ հոյակապ քաղաքիս Սերաստուոյ
տէր Գրիգորի» կը զրէ Տղայաւետարան մը
(Ալիքեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. 1239):

Յովհաննէս Սերաստացին այս Գրիգոր
առաջնորդը չի յիշատակեր եւ 1288ին կը
ներկայացնէ Նիկողայոս արքեպիսկոպոսը:
Բնական է որ այս 80 ամեայ շրջանին (1207—
1288) բաց ի Գրիգորէ եղած են դեռ ուրիշ ա-
ռաջնորդներ ալ, սակայն անոնց անունները
անծանօթ կը մնան:

Նիկողայոս «այր հեղ էր եւ խոնարհ
բարուք»: Նա շատ խոռովայոյց օրեր կը
տեսնէ եւ 1305ին մեռնելով Ս. Նշանի մէջ կը
թաղուի (Դիւան, Ժ., էջ 390—392): Անոր
յաջորդը Ստեփանոս՝ «այր հանճարեղ եւ կո-
րովարան» 33 ամեայ գործունէութենէ յետոյ
1338ին վախճանելով՝ «եղաւ ի վանս սուրբ
Նշանի» (Անդ, էջ 392): Սոյն Ստեփանոսէն
ունինք հետեւեալ յիշատակագրութիւնը՝

«Փառք... Արդ ես նւաստ ծառայ ծա-
սայիցն իսկապէս բարւոյն Տեառն մերոյ Յի-
սուտի Քրիստոսի Ստեփաննոս պիտակ ա-
նուամբ եպիսկոպոս Սերաստիա մայրաքա-
ղաքի անարի հեղինակս եւ մոլոր հովիւս ըն-
թացա(յ) յաստուածապահ աշխարհն Կիլի-
կ(ի)ոյ յերկրպագութիւն սուրբ աշոյն եւ ա-
թոռակալին յոգնաշարջար եւ բազմերանեան
երախտաւոր սուրբ հաւրն եւ Լուսաւորչի
հայկապետն սեռի սրբոյն Գրիգորի եւ յոյժ
պատուեալ եւ մեծարեալ դոսայ ի հայրապե-
տէն Տեառն Կոստանդեայ եւ Քրիստոս Աս-
տուած հաւատարիմ արքայէն Աւշին կոչե-
ցելոյ:

Իսկ բարեպաշտ արքայն Աւշին կամեցաւ
պարզեալ ընձեռել իմս նուաստութեան եւ ես
զմարմնաւոր յոյս առ ոչինչ համարեցայ, այլ
եռափափազ սիրով ըզճացայ կենաց քարոզիս
եւ բարձր պատուիրանիս աստուածապատում
սուրբ Աւետարանիս: Եւ հրամանաւ արքայի
մտա(յ) յարկեղս տանն, ուր հաւաքեալ կային
սուրբ կտակարանքն եւ թէպէտ եւ պատահե-
ցայ բազմաց եւ զանազանից, այլ ընդ սա հա-
ճեցայ, զոր էր գրեալ արագ եւ գեղեցկազիր
գրչի եւ բազմերանի ծաղկաւք զարգարեալ

չուի եւ հոն կը մեռնի: Անոր դամբարանին վրայ գրուած է՝

«Փոնոնի՛՛՛՛ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՍ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ԶՂ. ԻՍԿ ՆՈՐՈԳՈՒՄՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՍ ՌՄՂ. ԻՆ ԱՐԳԵԱՄԲ ԱԶՆԻԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԸՐԻԼԻԻ-ԿԵԱՆ ՄՐԳԱԾԱՆԻ»

(Նաթանեան, Տեղագր. Վիճ. Սեր., էջ 98, Սրուանձտեանց, Թոր. Աղբար, Ա., էջ 98, Թուակհանը՝ սխալ):

Ներսէսէն եւ անոր նկատմամբ կան շատ մը յիշատակագրութիւններ՝ «Ներսէս անուն Սերաստացի կոչեցեալ յաստիճան եպիսկոպոսութեան եւ վարդապետութեան շնորհիւ Տեան ցանկացայ սուրբ տառիս ինձ եւ արեան մերձաւորացս եւ ինձ խրատատու եւ զաստիարակ բարունի կաթողիկոսաց տէր Յովհաննէս եւ տէր Մինաս անուն, որ յաթոռն Կիլիկիոյ, այլ եւ միահամուռ ժողովրդեան Հայոց ազգիս Սերաստիոյ Եւրոկիոյ, Ուռհայու, Կարնոյ քաղաքի... ստացայ զսուրբ զիրքս զայս...:

Արդ եղեւ սկիզբն զրոյս (Աստուածաշունչ) թուին Հայոց ՌՁԵ (1636) ձեռամբ Բարազամ Չահրեկալի Սերաստացւոյ Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին եկեղեցեացս ի քաղաքիս եւ (ի) կատարումն սուրբ զրոյն եղեւ թուին Հայոց ՌՁԹ եւ եղաւ կամօք ամենայն ժողովրդեանն յիշատակ ի դուռն նորաչէն սուրբ Սարգիս եկեղեցւոյ ի հայրապետութեան եւ ի կաթողիկոսութեան տէր Փիլիպպոսի ի սուրբ աթոռն էջմիածնայ եւ տէր Սիւմէօն կաթողիկոսի, որ ի Կիլիկիոյ եւ յաւուրս եպիսկոպոսացն Անդրէաս եպիսկոպոսի, որ յաթոռն սուրբ Նշանի եւ Յովհաննէս եպիսկոպոսի, որ յաթոռն սուրբ Անապատի եւ Նիկողայոս եպիսկոպոս(ի)ն, որ յաթոռն սուրբ Հրեշտակապետի եւ Մկրտիչ եպիսկոպոս(ի)ն որ յաթոռն սուրբ Գէորգայ Տեւէկսէյու վանից ի հայրապետութիւն աշակերտիս մերոյ Ալեքսիանոս երիցու ի դուռն Խնդրակատար սուրբ Աստուածածինի:

Արդ ես անպիտան Ներսէս վարդապետ կոչեցեալս աղաչեմ զձեզ հանդիպող սուրբ տառիս... (յիշեսլիք) զիս զմեզաւորս եւ ծնողան իմ զկարապետն եւ Մահտեսի Խաթոնան եւ զեղբայրն իմ Մահտեսի տէր Աստուածատուր նորրնձայ քահանայն... եւ զորդիպեալ եւ աշակերտեալ մանկունս իմ զտէր Յակոբ բանի սպասաւորն, Խաչատուր սարկաւազն այլ եւ զչինոզ եւ աշխատող ի

վերայ մազազաթիս զԿարապետ Չահրեկալի Ատանացի (Ատանայի) եւ զՅովհաննէս զորդեգիրն իմ եւ զմիւս Կարապետն...»:

Եւ ընդ սոցին եւ զանպիտան եւ զմեզաւորս մած ծառայս ձեր զԿարազամ սուտանուն գրիչս յիշեցէք... որ չէի արժան ձեռնարկել ի զիրս յայս անարհեստ գրովս գրել, այլ... յուսողութեամբ բազմերախտ եւ երջանիկ հօրս մերում Ներսէս քաջ բարունապետիս ձեռնարկեցի եւ գրեցի...:

Արդ ի թուին Հայոց (1634) թագաւորն Տաճկաց Սուլթան Մուրադն եկն ի Սերաստիս գնալ ի Պարսս ի պատերազմ: Կամօքն Աստուծոյ հրաման եղեւ նորոգելոյ գեղեցեցին սուրբ Սարգսի, որ ի վաղուց հետէ հնացեալ եւ խախտեալ էր: Եւ երանաշնորհ հայրս մեր Ներսէս վարդապետն մեր տեսուչ մայրաքաղաքիս մերոյ Սերաստիոյ²² ... ձեռնարկ ի շինումն սուրբ եկեղեցեացս (եկեղեցւոյս) եւ բազում նեղութիւնս կրեաց ի յանօրինաց... շինեաց բազում ծախիւք եւ նորոգեաց ողորմութեամբն Աստուծոյ եւ լուսաւորեալ պայծառացոյց զկարգս եւ զկրօնաեկեղեցականաց, որ խանդարեալն էր ի թուրքմորթ եւ ի ծոյլ առաջնորդաց: Եւ յետ այսր յաւել եւս նորոգել զսուրբ Աստուածածին եկեղեցիս մեր...» (Նաթանեան, Տեղ. Վիճ. Սեր., էջ 100—106 եւ Թորոս Աղբար, Ա., էջ 189—191):

Բարազամ 1647ին Ներսէսի հրամանովը Աւետարան մը կը գրէ (Նաթանեան, անդ, էջ 106—107): Նոյնը 1660ին Ս. Նշանի հովանիին ներքեւ ուրիշ Աւետարան մը կ'արտադրէ (Հայկունի, Բարեբեանդ, էջ 187): Իսկ Շամլու 1648ին²³ Շարակնոցի մը եւ 1658ին Աւետարանի մը յիշատակագրութիւններու մէջ կը մտնէ յիշել իր ուսուցիչը՝ Ներսէս (Քէչիշեան Հ. Մ., Յուլ. հայ. Ձեռ. Ձմմառի, Թ. 327, անտիպ, Սարգիսեան Հ. Ն., Մայր ցուց., էջ 603):

²² Ս. Նշանի նորոգութեան համար ալ հրաման հանած է (Հանդ. Ամս., 1928, էջ 491):
²³ 1643ին՝ «Գրեցաւ (Կանոնագիրքս) ի Սերաստիս ընդ հովանեաւ սուրբ Նշանին, սուրբ Աստուածածինին, սուրբ Կարապետին եւ Անապատի սուրբ Աստուածածինին եւ Խնդրակատար սուրբ Աստուածածինին եւ սուրբ Յովհաննէսի միւս Խնդրակատարին եւ սուրբ Հրեշտակապետացն եւ սրբոյն Գէորգայ այսինքն վանորէից եւ քաղաքի սուրբ Քառասնից, սուրբ Աստուածածինին եւ սուրբ Սարգսին, թվին ՌՂԲ (1643)... դարձեալ յիշեցէք վերոյգրեալ Ամեղակինց Սարգիսն, որ ես յիշատակ ի Սերաստիոյ նորաչէն սուրբ Սարգիս եկեղեցուն...» (Գուշակեան, Յուլ. հայ. Ձեռ. Սեր., Թ. 282, անտիպ):

Ներսէսի կաթողիկոսական ընտրութենէ վերջ Սերաստիայի եւ Ս. Նշանի առաջնորդութիւնը կը յանձնուի Անդրէաս Բ. Արարկեցիին, որ 1654ին «Թաղի ի վանս Սերաստիոյ»: Անոր օրով Սարգիս Վ. Երզրումցին Ս. Նշանի մէջ իր զիտութեամբ մեծ անուն ու հռչակ կը հանէ (Դիւան, Ժ., էջ 403):

Ապա առանջնորդ եւ վանահայր կը նշանակուի Մելքիսէթ Բ. Պոլսեցի²⁴ «այր վհահանն եւ խոհական», որ վանքին պարտքերը կը վճարէ, շատ մը նորոգութիւններ կ'ընէ, զայն անօթներով եւ զանձերով կ'օժտէ եւ «առիթ եւ պատճառ ուսման մանկանց եկեղեցւոյ» կ'ըլլայ (Դիւան, Ժ., էջ 404): Միայն ինը տարի կը պաշտօնավարէ եւ 1664ին մեռնելով յաջորդ կ'ունենայ Իսահակ, որ արդէն 1666ին կը վախճանի (անդ, էջ 404) եւ դահ կը բարձրանայ Մելքիսէթ Գ. Սերաստացին, գրուատուած՝ «այր հանձարեղ եւ խոհական»: Անիկա վանքին պարտքերը վճարելու հարկին տակ կը դատուի եւ դրամ հաւաքելու նպատակով սուրբ Խաչի մասունքը հետն առած ճամբայ կ'ելլէ, բայց 1680ին Ուռհայի մէջ մահը վրայ կը հասնի (անդ, էջ 404—405):

Անոր յաջորդը՝ Անանիա Բ. թէեւ «այր խոնարհազնաց եւ առաքինի վարուք էր», սակայն կը ստիպուի 1692ին դահէն հրաժարել եւ զայն թողուլ փառամով Իսահակ Բ. Կեսարացիին, որ ութը տարուց մէջ՝ «կողոպտեաց ըստ արժանոյն զժողովուրդն եւ զժողովեաց զոմանս անօթս եկեղեցւոյն եւ արտաքոյ եղելոցն եւ թողեալ զբազում պարսս ելեալ գնաց, ուր ինքն կամեցաւ» (անդ, էջ 405—406):

Իսահակ Ս. Նշանի մէջ 1696ին քահանայ կը ձեռնադրէ Մեծն Միսիթար Սերաստացին²⁵ — Հիմնադիրը Միսիթարեան զյոյ

²⁴ Հմմտ. կնիքը Հանդ. Ամս., 1927, էջ 36: Անոր օրով Ս. Նշան Գանձարան մը կը ստանայ (անդ, էջ 316) եւ ապա միւս Մելքիսէթի (Գ) ժամանակ «զրեալ ծաղիկեցաւ (Աւետարան ձեռամբ նուստտ եւ անարժան որդւոյ Բարզամ զրչի Միսայէլ վերածայնաւ կան...» (Սուրհանդակ, 1902, Թ. 1078): Դարձեալ զայր կը զրէ Մատթէի մեկնութիւնը Յակոբ եւ Խաչատուր կաթողիկոսներու ատեն (Աղիւնեան Հ. Ն., շատուր կաթողիկոսներու ատեն (Աղիւնեան Հ. Ն., շատուր Յիշատ. էջմ. 1296, հմմտ. Կարենեանց, Յուլ. հայ. Ձեռ. էջմ. 1279):
²⁵ Միսիթարին ժամանակ մը կենտից եւ ճանապարհորդակից եղած է Յովնան Վ. Եղիսիան Եւրոպիացին, որ Սերաստիայի թեմին մէկ մասին վրայ կամ Գալէմբերեան, Կենսադուրութիւններ, Ա., վիւննա 1915, էջ 284: Ալեքան, Հայ-Վիւննա, 1896, էջ 343: հմմտ. եւ Նաւասարդ, 1924, էջ 131):

Միւրանութիւններու — որ կանխաւ Անանիա Բ. եպիսկոպոսէն կիսասարկաւազութեան եւ սարկաւազութեան աստիճանները ստացած էր (Թորոսեան Հ. Յ., Վարք Միսիթարայ Աբբայի Սերաստացւոյ, Վենետիկ, 1901, էջ 57 եւ 100):

Իս. Կեսարացիին յաջորդ կ'ընտրուի Աստուածատուր Սերաստացին, Թմբուկ կամ Դմբուկ յորջորջուած, որ Ս. Նշանի վանքն իր յատուկ խնամածութեան առարկայ ընելով զայն կը բարեկարգէ: Լսենք Յ. Սերաստացին՝ «Ի ժամանակս սոյն Դմբուկ անուանեալ Աստուածատուր արքեպիսկոպոսիս յորով յիշատակը եղան ի վանս սրբոյ Նշանիս մեծափոյթ ջանիւ եւ աշխատութեամբ նորին, զոր ցանկայր որչափ ինչ հնարէր ընու զպակասութիւն սորին եւ յորդոր արկեալ խրախուսէր զժողովուրդն, որք եւ ամենեքին փութային ի նոյն, որպէս ի Կոստանդինուպոլիս եղեալ Սերաստացի ժողովուրդն թէ բնականքն եւ թէ հիւրքն, զանձանակ անուամբ զողորմութիւնս հաւաքեալ յիշատակ շինէին եւ առաքէին ի սուրբ մենաստանս, յորոց միջի գերազոյն հանդիսացան ջրկեր վարպետքն, որք էին անձինք 81, զոր մի պատուական մեծ երկոտասանթեւեան երկու հազար տրամակչիւ ծանրութեամբ արծաթի ջահ շինեալ եղին յիշատակ ի սուրբ վանս, զի մի գուցէ վնասեցի կամ վաճառեցի յանխիղճ արանց հնարիցին մնալ զայն ի քաղաքն յեկեղեցւոյ սուրբ Աստուածածինին, զոր մինչեւ ցայժմ կայ եւ մնայ անդ: Ունէին սոքա ի սուրբ վանս եւ քառասուն արծաթեայ կանթեղս, զիլիք անուանեալ, որպէս եւ ցուցանէ 81 անձանց ստորադրեալ զիր կոնդակին, բայց այժմ եւ ոչ մին երեւի ՌՁԳԿ (1714): Եւ վանս իւղի կանթեղացս առին արտ մի երկու հարիւր դահեկանի առ ի ցանելոյ ի նմա կտաւատ եւ եղին յիշատակ ի սուրբ վանս, որ է հանդէպ մենաստանիս՝ յարեւմտից կուսէ մօտ լուսադրերն ի ներքոյ ճանապարհին, որ ցարդ կայ եւ մնայ» (Դիւան, Ժ., էջ 407—408):

Աստուածատուր 1722ին կը թաղուի «ի մենաստանիս առաջի դրան տաճարի մեծի եկեղեցւոյն. հաւասար յատակի գաւթին է շերիմ նորին» (Դիւան, Ժ., էջ 408):

Աստուածատուրին յաջորդը 1722ին արդէն կը նշանակուի: Այդ Առաքել Ակնցին է, որ Եկեղեցաց գաւառէն կը ժամանէ Ս. Նշան,

ուր Սերաստացիներն անոր կը յանձնեն «զգահս, կարասիս վանուց, թէ եկեղեցական սուրբ անթթը» (անդ, էջ 410): Անիկա իր նախորդէն աւելի լայն եւ արդիւնաւոր գործունէութեամբ նշանաւոր կը հանդիսանայ²⁶: Ամէն միջոց ձեռք կ'առնու եւ ամէն տեսակ դոճողութիւններու ենթարկուելով Ս. Նշանի վիճակը զգալիորէն կը բարեփոխէ:

«Այս Առաքել վարդապետ եւ արհիւարիւհոպոսն, յօրէ յօրմէ եղեւ առաջնորդ՝ երկնէք ամս իբրեւ հինգ ի սրտի իւրում վասն շինութեան եւ նորոգութեան սրբոյ մենաստանիս... ուստի ժողովեաց առ ինքն զիշխանս քաղաքիս եւ նոքօք հաճեցոյց զգատաւորն եւ էաւ զարդն եւ առաքեալ ի Կոստանդնուպօլիս առ թէվէքէեան մահտեսի Յարութիւն ամիրայն եւ նա ժողովեալ ընդ իւր բարեպաշտ ամիրայս ժամանակին, էաւ նոքօք հրաման յարքայէն եւ զզիր վասն նորոգութեանն վանուց եւ առաքեաց առ առաջնորդն... եւ ապա սկիզբն արար նորոգութեան ի Սեպտեմբերի 8 եւ շինեաց մեծ եկեղեցոյ դմբէթն սրբատաշ վիմօք կղտերբ եւ բուով, զտանիքն քարիւ խճով եւ կրով եւ ամբացուցեալ սպիտակացոյց զառաստաղն, զկամարն, զորմունն, կառոյց յետ կոյս դասին եւ զերկու խորանն յաջմէ եւ յահեկէ, շինեաց եւ զվերնատունս կանանց, զի ոչ գոյր յառաջ: Նորոգեալ պայծառացոյց եւ զտաճար սուրբ Աստուածածնին եւ շինեաց ի մէջ կամարաց համբար ցորենոյ եւ գարոյ: Սպիտակացոյց գտանիք եւ զմէջ եկեղեցոյ սուրբ Կարապետին եւ զկատարս յաջակողմեան մաքրեաց եւ կանգնեաց ի սմա սեղան յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Կերտեաց եւ վայելուչ առաջնորդարան կրկնայարկ եւ կից նմին մառան, գինետուն եւ զսենեակս միաբանից հանդէպ միմեանց եւ առաջի նոցա պարտէզ ծաղկանց փոքր, նորոգեաց եւ բարձրացոյց եւ զպարիսպս շուրջանակի: Եւ հաղիւ աւարտեաց զշինուածն ի լրման միոյ ամին, յորում աւուրն հինգ հարիւր գործաւորք աշխատէին՝ ծախելով ի նմա քասկս իբրեւ քասն, բաց ի նպաստիցն, զոր ընկալաւ ի վիճակէն, վասն զի քաղաքացիքն յաւուրն համարուեստ մի բերէին եզ մի, հաց, բրինձ եւ այլն եւ կերակրէին զաշխատաւորսն եւ ինքեանք աշխա-

²⁶ Նաեւ գրուատուած է իբրեւ՝ «աստուածաբան, հեղահոգի, պանծալի»: Ս. Նշանի մէջ քանի մը ձեռագրութիւն կ'ընէ (Հանդ. Ամս., 1925, էջ 574): Անոր օրով Յայսմաւուրք մը կ'արտագրուի (անդ, 1928, էջ 493):

տէին մինչեւ ցերեկօյ եւ երեկօյն միաբանեալ ոմանք հինգ եւ ոմանք տասն մշակաց վարձս տային եւ զնային եւ ի միւսունն աւուր այլ համարուեստքն գային մինչեւ յաւարտել շինուածոյն: Թուի թէ աստի մնացեալ է սովորութիւն համարուեստից ամենայն ամի գալ ի սուրբ վանս եւ մատաղ մատուցանել եւ այլն: Եւ բոլոր զիւղականքն ամենայն տուն մի կամ երկու սայլ զերան եւ զայլ փայտս շինուածոյն բերէին: Յետ այսորիկ բազմացոյց զեկեղեցականս եւ կանոնեաց նոցա հանապազօր կանխել ի սլաշոն Տեառն սաղմոսերութեամբ: Առատացոյց զլուծս գոմշոց եւ եղանց եւ ջոկս ոչխարաց եւ այծեաց եւ ելից զսուրբ վանս բարութեամբ հարկաւորօք՝ ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ ամենազօր սուրբ Նշանի նորա, ի թուին ՌՃՀԷ (1728):

Եւ յետ երկր ամաց իբրեւ ետես թէ՛ անհնար լինի վճարումն պարտուցն նպաստիւք վիճակիս, ել Առաքել եպիսկոպոս անձամբ ի սրբոյ վանիցս եւ զնաց ի Կոստանդնուպօլիս առ ի դարման զեղոյ մատուցանել պարտուցն եւ իբրեւ եհաս անդ ծագեցաւ խռովութիւն մեծ ի մէջ այլազգեացն, օրոց զլուսի ամբարձեալ կտրատեցին զփոխարքայ Իբրահիմ բղեշինս եւ իջուցեալ զսուլթան Ահմէտ յաթոռոյն եղին ի տեղի նորին զեղբորորդին նորին զսուլթան Մահմուտ եւ նա անողորմ կոտորումն արարեալ խաղաղացոյց զաղմուկն ապստամբութեան ի թուին ՌՃՁ: Եւ ապա Առաքել եպիսկոպոսն շրջադայեալ ի սենեակս լումայափոխից, յիջեանս եւ ի փոռնս, յայլ տեղիս եւ զումարեաց նպաստս յանուն վանիցս, որով վճարեաց զպարտանս եւ ետ շինել զմի պատուական զբեատ եպիսկոպոսական թագիւ եւ այլովքն եւ զանազան ոսկեղէն եւ արծաթեղէն զարդիւք եւ բազում յիշատակօք եւ դարձաւ եւ եկն ի սուրբ վանս» (Դիւան, Ժ., էջ 410—412):

Այս հաղորդումներուն կարեւոր մէկ մասը Ս. Նշանի եկեղեցոյն մէջ գտնուած հետեւեալ արձանագրութեամբ ալ կը հաստատուի՝

«ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԾՈՒՐԲ ՆՇԱՆԻ ԿԱԹՈՒՂԻԿՆԵՆ ՎԵՐՍՏԻՆ ՍՈՒՐԲ ԺԱՄՍՏՈՒՆՆԵՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾՆԱԾՆԱՅ ՏԱՃԱՐՆ ԵՒ ԺԱՄՍՏՈՒՆՆԵՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՃԱՐՆ ԵՒ ԶԱՅԼ ՈՒԵՏԱՏԵՂԻՍ ԵՒ ՇՐՋԱՊԱՏ ՊԱՐԻՍՊՈՆ ԵՒ ԽՅԵՐՆ Ի ԺԱՄՍԱՆԱԿՆ ԱԿՆԵՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԷՐ ԱՅՆ ԱՏԵՆ, ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՃՂՁ» (Նախանեան, Տեղ. Վիճ. Սեբ., էջ 51):

Առաքելի օրինակը շատերը ձեռներէցութեան կը յորդորէ եւ ահա Եղիազար վարդապետը կը նորոգէ Ս. Հրեշտակապետի վանքը: Իսկ Առաքել՝ Սնայապատ վանքը կը վերաշինէ եւ զայն իր իրաւասութեան կ'ենթարկէ: Ասկէ վերջ Սերաստիայի առաջնորդները զայն կը կառավարեն տեղապահով (Դիւան, Ժ., էջ 413):

Առաքել Ակնցին քառօրդ դարու ծանր, բայց խիստապէս արդիւնաշատ գործունէութեամբ 1747 Սպրիլ 14ին մշտնջենապէս կը փակէ իր աչքերը «Եւ եղաւ պատուով ի տապանի ի սուրբ վանս ի վաւթի սուրբ Նշանի մեծի եկեղեցոյն ի հիւսիսակողմն դրան սրբոյ տաճարին»: Անոր տապանագիրն է՝

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՌԱԲԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԷՐ ԱԿՆԱՅ ԳԻՒՂԵՆ ԿԱՐԱՊԵՏՈՒ ԵՒ ԵՂԵՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲՈՅ ԱԹՈՒՌՈՅՍ, ՈՐՈՅ ԱՌՈՒՐՍ ԵՂԵՆ ՆՈՐՈԳՈՒՄՆ ՍՐԲՈՅ ՏԱՆՍ ԱՅՍ ՎԵՐՍՏԻՆ ԵՒ ՅԱՋՈՐԴԵԱԼ ԱՄՍ 26 ԵՒ ՀԱՆԳԵԱՒ ԱՌ ՏԵՐ ՔՐԻՍՏՈՍ Ի ԹՈՒԱԿԱՆԻՆ ՄԵՐՈՅ ՌՃՂՁ»

(1747, Դիւան, Ժ., էջ 416, Երկրագունդ 1887, էջ 65):

Առաքելի յաջորդութեան կը հրաւիրուի Եղիազար վարդապետը, որ արդէն իբրեւ Ս. Հրեշտակապետի վանքի առաջնորդ ժիր գործունէութեամբ սրտերը զբաւած էր: Նա՝ «այր մեծազօրծ եւ վեհանձն» իր վրայ զբաւած յոյսերը կը ջանայ արդարացնել: Թէեւ անոր չի վիճակուիլ երկարատեւ պաշտօնավարութիւն, սակայն բաւական զործ կրնայ զլուսի հանել՝ «Յաջորդելն իւրում առժամայն ձեռն էարկ ի հիւսիսակողմն պարսպի մենաստանիս եւ իբր տասն կանգնաշափ ի ներքս էաւ ի կալէն եւ ետ շինել ծայրէ ի ծայր հաստատ եւ բարձրացոյց քան զառաջինն եւ յաւելուածոյ պարսպին շինեաց երկու մեծամեծ սենեակս ի ներքոյ եւ ի վերոյ իբր առաջնորդարան ինքեան» (Դիւան, Ժ., էջ 417): Նա խնամատար առաջնորդ եղած է եւ սովի առնն օգնութեան փութացած (Սիւրմէեան Ա. եպ., Յուց. հայ. Ձեռ. Հայկ. Վիլ., Բ., էջ 41—42): Անոր մահը մեծ սուգ կը պատճառէ: Աճիւնը Ս. Նշանի մէջ կ'ամփոփուի: Տապանագիրն է՝

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՄՆՈՅ ՏԵՂԻ ԾԵՐՈՒՆԱՓԱՅԼ ԳԻՏԱՊԵՏԻ ԵՂԻԱԶԱՐ ՔԱՋ ՀՈՒՅՏՈՐԻ²⁷, ՈՐ Է ՏԵՂԱՆԻ ՍԵՐԱՍՏԱՅԻ

²⁷ Ձեռագրի մը մէջ կը կարդանք՝ «Ի թուին ՌՃՂՁ նստաւ (Եղիազար) առաջնորդ ի Ս. Նշան յա-

ՀՈՎԻԻ ԸՆՏՐԵԱԼ ՍՈՅՆ ՆԱՀԱՆԳԻ, ՍՐԲՈՅ ՈՒԵՏԻՍ ՏՆՏԵՍ ԲԱՐԻ, ՈՐ ԵՒ ՀԱՆԳԵԱՒ ՄԵՐՈՅ ԹՎԻ ՌՄԳ 18 ՓՏՐՎԱՐԻ»

(Դիւան, Ժ., էջ 418 եւ Երկրագունդ, 1887, էջ 64, ուր տպուած է ՌՃԳ ի Ժ. փոքրաբնի):

Եղիազարի մեծաշուք թաղումէն յետոյ անոր հովուական դաւազանը կը յանձնուի Առաքել Ակնցիին ազգականներէն Կարապետ Ակնցիին, որուն օրով Անապատի ունիւր կը կարգուի Յարութիւն Երզնկացին, որ զբաւանութեամբ եւս զբաղած է (Դիւան, Ժ., էջ 419): Թէեւ Կարապետ քանամեայ պաշտօնավարութիւն կ'ունենայ, սակայն Ս. Նշանի նկատմամբ անոր գործունէութիւնը լուրւած է: Հաւանականօրէն միայն վարչական հարցերը ժամանակը բռնած ըլլան, քանի որ քիչ յառաջ արդէն հիմնական նորոգութիւններ եւ շինութիւններ կատարուած էին: Մեռնելով 1774ին կը թաղուի Ս. Նշանի գաւիթին մէջ. Առաքելի եւ Եղիազարի մօտ: Կարապետի դամբանաքարին վրայ գրուած է՝

«ԱՅՍ Է ՔԱՐԻ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ Է ՍԱ Ի ՄԱՐՄՆՈՅ ՏԵՂԻ, Ի ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԻ ԵՒ ՔԱՋ ՀՈՍԱՊԵՏԻ, Ի ԳԻՒՂԵՆ ԿԱՐԱՊԵՏՈՒ, ՀՈՎԻԻ ՔԱՋ ԱՌԱՋՆՈՐԴԻ, ՍՈՒՐԲ ՈՒԵՏԻՍ ՏՆՏԵՍ ԲԱՐԻ, ԵՒ ԱՐԵԳՆԱՓԱՅԼԻ Ի ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՈՐ ԿՈՅԻ Ի ՍԵՐԱՍՏՈՅ ԵՐԿՐԻ Ի ՆՈՅՆ ՄԵՑԻ ՆԱՀԱՆԳԻ ՍԱ ՓՈՒԵՑԱԻ Ի ԹՈՒԱԿԱՆԻ, ՌԲՃԻԳԻԵ Ի Թ. ՅՈՒՆՎԱՐԻ, ՈՐՔ ՀԱՆԳԵԱՒ ԱՅՍ ՄԵՐՄԻ ԱՍԱՅԵՔ ԱՍՏՈՒԱԾ՝ ՈՂՈՐՄԻ»

(Երկրագունդ, 1887, էջ 63—64):

Կարապետին պակասը կը ընու Յակոբ Արմնտացին²⁸ — այր վեհանձն եւ ազատաբարոյր — որ էջմիածին երթալով Սիմէոն կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի (Դիւան, Ժ., էջ 421 եւ Արարատ, 1876, էջ 176): Սիմէոն զՅակոբ՝ «կացոյց ի վերայ բոլոր նահանգիս Սերաստիոյ եւ զբեալ ի

թոնն Գետազարձ Պետրոս հայրապետին եւ անդ եւս բազում նորոգութիւնս արար դարպասիցն» (Սիւրմէեան Ա. եպ., Յուց. հայ. Ձեռ. Հայկ. Վիլ., Բ., էջ 43, հմտ. նաեւ էջ 41—42: Եղիազար բժշկութեան ալ կը հասկնար. հմտ. Տաթև, Տարեցոյց, 1928, էջ 248):
²⁸ Յակոբ Արմնտացին Յովհաննէս Սերաստացիին հետ Ս. Նշանի եւ Սերաստիայի առաջնորդութեան համար երկարատեւ վէճեր կ'ունենայ (հմտ. Պատմ. Սեբ., Բ., էջ 246—280):

զպատրիարդական կոնդակի Սեպտամբեր 8 եւս եւ ի 28, ետ ի նա յորում կոչէր զնա ընդհանրական առաջնորդ սուրբ Նշանի, սուրբ Հրեշտակապետի, սուրբ Անապատի, սուրբ Գէորգայ եւ Խնդրակատար սուրբ Աստուածածնի» (Դիւան, Ժ., էջ 421):

Յակոբ «ձեռն էարկ ի սուրբ Նշանի վանս եւ շինեաց ի հիմանց արեւմտեան կողմն պարսպին եւ զերկաթեայ միալիեղի դուռն եւ զմեծ հասարակաց սեղանատունն, ոչ գոյր յառաջ եւ զսենեակս ուխտաւորաց ի վերայ եւ ի ներքոյ եւ զտեղի անասնոց փոքր եւ զամենայն խաթարեալ եւ զաւերեալ տեղիս մեծի մենաստանիս նորոգեալ շինեաց ծախսելով ի նմա դրամս աւելի քան զքսան քսակ» (Դիւան, Ժ., էջ 422): Այս ամէնը ի գլուխ կը հանուէր 1781ին: Յակոբ 1797ին նորէն շինարարութեան կը ձեռնարկէ: «ՌՄՊՁ տրօք բարեպաշտ ժողովրդոցն Սեբաստիոյ շինեաց Յակոբ արհին զհասարակաց մեծ դոմն եւ զմի կարգ կարգ միաբանից սենեակսն, զյարդանոցն, զփայտանոցն եւ զամենայն փտեալ եւ զխարխալեալ տեղիսն նորոգեաց ծախսելով ի նմա իրբեւ քսան քսակ դրամս: Եւ այսմ շինութեան վերակացուք էին միաբանք սուրբ ուխտիս, այսինքն՝ Սեբաստացի Սահակ վարդապետ, Յովակիմ վարդապետ, Գրիգոր վարդապետ, Գարրիէլ վարդապետ, Չաքարի վարդապետ, Յարութիւն վարդապետ, Միքայէլ վարդապետ, Պօլսեցի Մինաս վարդապետ, Թէքերտաղցի Գրիգոր վարդապետ, եւ երկու սարկաւազունք Յակոբ եւ Յովնան, զոր յետ մի քանի ամաց յաւուր տօնի Գիւտ Խաչին ի Հոկտեմբերի 25 զնոսս եւս ձեռնադրեաց արեղայ, զՅակոբն անուանելով կարապետ վարդապետ եւ զՅօննան կոչելով Յօհաննէս վարդապետ» (Դիւան, Ժ., էջ 422—423):

Յակոբ ամբողջ քառորդ դար մը ժիրաժիր կ'աշխատի: Նա ինքզինքը շատ յոգնած ու ծերացած կը զգայ եւ իր պաշտօնէն կը հրաժարի: Իր մահկանացուն կը կնքէ 1801ին: Մահաբձանին վրայ գրուած է՝

(Մարտ 19, 1810, Դիւան, Ժ., էջ 424ին Երկրագունդ 64—65, ուր կայ՝ «Բարուք մահումը սա վախճանի, Բառի իմէ թուականի, որ է ՌՄԾ Մարտի ԺԹ»):

1792ին «ի յառաջնորդութիւն մայրաքաղաքիս մերոյ Սեբաստիոյ յԱրմատնցի տէր Յակոբայ արքեպիսկոպոսի եւ քաջ երաժշտի եւ աթոռաչէն վարդապետի» Մարտիրոս Գարդղելք մը կը գրէ (Ա.կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 1038):

Բայց դեռ քանի մը խօսք:
Յակոբ Արմատնցին աւելի անուանի է իր բարեկարգութիւններով: Նա չէր զօհանար արտաքինով, այլ կը մտնէ ներսը: Կը տեսնէ իր թեմին մէջ եղած վանքերու մէջ տիրած զեղծումներն ու անկարգութիւնները եւ ժողով գումարելով կը զնէ ժամանակին ու պարագաներու յարմար կանոններ եւ անոնց պահպանութեան հետամուտ կ'ըլլայ: Կ'արժէ մանրամասնօրէն նկատողութեան առնուլ այս ամէնը՝ «Յակոբ եպիսկոպոս Արմատնցի՝ առաջնորդ սուրբ Նշան վանից Սեբաստիոյ հող կալու բարեկարգելոյ զվանօրայս Սեբաստիոյ յորում էին հինգ վանք եւ առաջնորդք նոցա հինգ եպիսկոպոսունք. ամենայն ուրեք զրեթէ այսպէս էին, որքան նստէին օգնականութեամբ այլազոյ իշխանաց, զպարտս զիգէին ի վերայ վանից, յորմէ պահանջէին այլազոյք եւ հրաժարել պարտատեարց զգրաւս եւ զեկեղեցիս իւրացուցանէին Տաճիկք, որպէս արարին վասն խոտովութեան ժողովրդականաց Սեբաստիոյ եկեղեցին յանուն Լուսաւորչայ ինքեանց մղկիթ, որ է մինչեւ ցայսօր ի ձեռս նոցա: Վասն առաջս ատնելոյ սոյն օրինակ անկարգութեանց, կարգեաց Յակոբ եպիսկոպոս քսան եւ չորս իշխանս ի միում եկեղեցուջ եւ տասն եւ երկու ի միւսումնս եւ եօթն ծերունիս ընդ նմին արար ժողով ի վանս Անապատու, յորս էին 26 քահանայք, 7 ծերունիք եւ 36 իշխանք, եղին կանոնս տասն եւ մէկ օրինակ դայս:

Ա. Նախ՝ զի ի քաղաքիս եւ բոլոր վանօրէիցս մէկ առաջնորդ լիցի. բաց յառաջնորդէն այլ ընտանի եպիսկոպոս մի լիցի, եթէ ոք ի կենդանութեան զիտին կամիցի երկրորդել եւ բաժանել զառաջնորդութիւնս կամ եպիսկոպոսութիւն, այնպիսին յերեց սուրբ ժողովոցն անիծեալ՝ նդովեալ լիցի:

Բ. Յորժամ վախճանեացի առաջնորդն նոյն ժամայն հանցեն զննջեցեալն եւ փակեալ

«ՅԱՅՍՄԻԿ ԾԻՐՄԻ ՆԵՐԱՄՓՈՓԻ ՅԱԿՈԲ ԱՐՉԻՆ ՄԵՐ ԳԵՐԱՐՓԻ, ԱՄՔԱՆԱԶԵԱՆ ՄԵՐՈՅ ՍԱԳԻ, ԱՆԵՈՂՔ ՍՍԱՍՐԻ ԱՄԲԻԾ ՀՈԳԻ. ԿՐՕՂՆ Ի ՄՏԻ ԶԲԱՆ ՄԱՏԵՆԻ, ԳՈՐՈՒԱԲԱՆՆ Ի ՅԱՏԵՆԻ, ԵՐ ՏԵՂԱՆԻ ՅԱՐԱՐՏԱՆՅԻ, ՈՒՆԵՏԻ ՍՐԲՈՅ ԴԵՏ ՄՏԱՅԻ, ԲԱՐԻՈՒՔ ՄԱՀՈՒԱՄԲ ՍԱ ՎԱԽՃԱՆԻ Ի ՌՄԾ ԹՈՒՍԱԿԱՆԻ ՄԱՐՏ 19»:

կնքեցեն զառաջնորդարանն երկու ծերունիքն եկեղեցուց եւ ոչ բացցի մինչեւ զայցէ նոր դէտն պարաթիւ եւ եկեալ կնքող իշխանքն բացցեն զառաջնորդարանն եւ յանձնեցեն տուժարաւ զինչս նոր առաջնորդին:

Գ. Ի մէջ Հրեշտակապետի եւ Անապատի ուէիլ լիցի զիտութեամբն առաջնորդին եւ ամ յամէ առցէ զհաշիւն ի նոցանէ եւ ում կամիցի դէտն նմա տացէ զուէիլութիւնս եւ բաց ի յառաջնորդէն այլ ոք ձեռնամուխ մի լիցի, եթէ ոք յանդգնի, բանիւ է:

Դ. Առաջնորդն ամ յամէ սրբոց վանօրէիցն հաշիւն տացէ իշխանաց:

Ջ. Ի մէջ վանացս աթոռակալ լիցի եւ եթէ պատահեցի մօտ այլազոյք երթալ, նա երթիցէ եւ ոչ այլ ոք:

Ե. Բարող ասողք վարդապետք յերկու եկեղեցիս խրատ ասացեն ծննդեան, յառաջաւորաց եւ պահոց:

Ը. Առանց զիտութեան առաջնորդին միաբանք ոչ երթիցեն ի քաղաքն եւ մի ննջեցեն անդ:

Թ. Ի միաբանից եթէ ոք զնալ կամիցի՝ երթիցէ:

Ժ. Միաբանք ի միասին ճաշեցեն զկերակուր եւ մի ցիր եւ ցան, աստ եւ անդ:

ԺԱ. Միաբանք մի երթիցեն ի սենեակս ուխտաւորաց առանց կոչման:

Չայսոսիկ միաբան հաւանութեամբ զրեալ կնքեցին ստորադրութեամբ իւրեանց ի մէկն Ապրիլի ՌՄԼ թուին Հայոց» (Դիւան, Ժ., էջ 738—740):

Կանոնադրութիւն մը՝ որ այնքան ցայտուն Յակոբի խոհմութեան եւ փորձառութեան պատկերը կը ներկայացնէ: Պահանջը էր, որ կը լրացուէր:

Յակոբ Արմատնցիի հրաժարականին ընդունելութենէ յետոյ անոր յաջորդ կ'ընտրուի Գրիգոր Գաղատացին, որ էր «այլ ճոռոմախօս»: Նա Ս. Նշան վանքի Ս. Աստուածածին եկեղեցին ներկել կու տայ եւ զանազան նկարներով կը զարդարէ: Դարձեալ խաչկալը՝ «նորոգ շինեալ եւ ոսկեզօծեալ շքեղազարդեաց» (Դիւան, Ժ., էջ 424): Այդ շրջանին Ս. Նշան կը հանդիպի նորընտիր Դանիէլ կաթողիկոսը, որուն կաթողիկոսական ձեռնադրութեան Գրիգոր Երեք խորան վանքի եկեղեցույն մէջ կը մասնակցի: Նա ետքէն Դանիէլէն օրհնութեան կոնդակներ առած կ'անցնի Կ. Պոլիս (Դիւան, Ա., էջ 151, Ե., էջ 234, Է., էջ 503—508): Հոս Դանիէլի կու-

սակցներուն եւ պատրիարքին համակրութեան եւ զնահատանքին կ'արժանանայ եւ նմանապէս Գաղատիայի առաջնորդ կ'ըլլալայն հաղիւ քանի մը տարի վերջը հոն կընայ մեկնել եւ 1810ին կը մեռնի²⁹:

Անոր առաջնորդութեան շրջանին Ս. Նշան ծանր օրեր կը տեսնէ՝ ճիւղաճախարհային ժամանակիս անհամար զօրացն զուժարեւոյց, յորով վիշտս եւ տառապանս կընցին քաղաքացիք եւ զիւղականքն, մանաւանդ սուրբ մենաստանս, եւ Գրիգոր արքեպիսկոպոսն. վասն զի իրբեւ յիսուն հեծելազօր հրամանաւ քաղաքապետին եկեալ նստան ի վանս առ ի պաշտպանել զսա ի թշնամեաց, զորոց զվտայնս եւ զերկվարացն հոգաց դէտն՝ իրբեւ ամիսս երիս» (Դիւան, Ժ., էջ 426):

Գրիգոր Գաղատացիին Գաղատիա մեկնելէ վերջ՝ «Ընտրեցաւ ի դէտ ի տեղի նորին յաթոն Սեբաստիոյ Սեբաստացի Յօհաննէս Բարունին» (Անդ, էջ 429), որուն ժամանակ Ս. Նշանի միաբան էին՝ Կարապետ, Գրիգոր, Սահակ Պուրսացի, Յովակիմ Սեբաստացի, Գարրիէլ, Չաքարիա եւ Յակոբ վարդապետները, Կարապետ սարկաւազը, Ս. Հրեշտակապետի ուէիլ Յարութիւն վարդապետ եւ Յակոբ սարկաւազ ու Անապատի ուէիլ Աւետիք վարդապետ» (Դիւան, Ժ., էջ 429. հմտ. եւ էջ 432): Յովհաննէս էջմիածնի մէջ Եփրեմ կաթողիկոսէն եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանայ եւ վերադարձին Ս. Նշանի աւագ խորանին խաչկալը «չքնադատեսիլս» կը կազմէ (Դիւան, Ժ., էջ 430—431) եւ բաւական շինութիւններ կ'ընէ, ինչպէս հետեւեալ արձանագրութենէն յայտնի է՝

«ԱՆՀԱՍ ՊԱՐԳԵՏՈՒ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԻՒ ԱՆԲԱՒԱՍՈՐԻՆ ԶՔՆԱԳԱՆՄԱՆ ՇԻՅՈՒ ՇԻՆԵՅԱՆ ՏԱՃԱՐՔ ԵՐԵՒԻՆ ԶԱՆԱԿՈՒԹ ԶԳԱՄԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՉԻ ՎԵՐԱԳԻՏՈՂԻՆ ՆՊԱՍՏԻԻՔ ԶԱՆԵՑ ՆԻԶԱՐ ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՐՃ ԱՄԻՐԱՅԻՆ ՇՆՈՐՀԱԶԻՐ ՀԱՅՅՄԱՄԻՔ ԲԻՐԸՆԿԱԼ ՅԱՂԹՈՂ ՍՈՐԲ ՆՇԱՆԻ ԵՒ ՆՈՐՈԳԵՍԱՆ ՅԱՐԿԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՍ Ի ՀԻՄՆԱՅ ԿՐԿԻՆ ԹԵՒԱԿՈՒԹԵԱՄԻ ԿԱՐԱՊԵՏ ԲԱՐՈՒՆ ԵՒ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԱՐԳԱՍԵՏՈՒ ԱՐԳԵԱՆՅ ՍԵՐԱՍՏԵԱՆ ԽՄԲԻՑ ԱՐԱՄԵՆԱՆ ԱԶԻՆ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1828 ԵՒ ԹԻՒ ՀԱՅՈՅ ՌՄՉԵ»

(Նաթանեան, Տեղադր. Վիճ. Սեբաստ., էջ 51—52):

Յովհաննէսի օրով Սեբաստիայի առաջնորդութիւնը արքեպիսկոպոսական առաջ-

²⁹ Գրիգոր 1802ին մասնակցած է Աղթամարի կարապետ կաթ.ի գումարած Սիւնհոդոսին (Արարատ, 1893, էջ 196):

նորընթաց կ'ըլլայ եւ այն 1826ին Կ. Պոլսոյ անդային ժողովին որոշումովը (Դիւան, Ժ., էջ 434) :

Յովհաննէս կը մեռնի 1830ին : Անոր տապանաքարը հետեւեալ արձանագրութեամբ օժտուած է՝

ԱՐՓԻ ԼՈՒՍԱՓՈՅՈՒՄՆԵՐ ՊԱՐԾԱՆԵՐ ՍԵՐԱՍՏԵԱՆ, ԱՀԱ ՄԹԱԳՆԻ ՍԵՒ ԱՄՊՈՎ ՄԱՀՈՒԱՆ, ՀՈԳԻՈՅ ՊԱՏԳԱՄԱՅ ՓՈՂ ԱԶԳՈՂԱԿԱՆ, ԿՈԶԻ ՅԵՐԿԵԱՅԻՆ ՓՈՂԵԼ ՀԱՐՍՆԱՐԱՆ, ՀՈՎԻՒՆ ԱՐԹՈՒՆ ՀՕՏԻՆ ԲԱՆԱԿԱՆ, ԱՅԺՄ Ի ՔՈՒՆ ՄԱՀՈՒ ՆՆՁԷ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ, ՎԵՀՍ ՅՕՀԱՆՆԷՍ՝ ՄՏՕՔ ԽՈՂԱԿԱՆ, Ի ՄԱՆՈՒԿ ՏԻՈՅ ՏԵՆՁԱՅՈՂ ՈՒՍՄԱՆ, ՏԵԱՌՆ ՅԱԿՈՒԲ ՅԵՐԿԵՆ ԱՐՄԸՏԱՆ, ՈՐ ԷՐ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՏԵՍՈՒՉ ԸՆՏՐԱԿԱՆ, ՆՄԱ ԱՇՆԱԿԵՐՏ ԵՂԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ, ԱՊԱ ԵՒ ՅԱԶՈՐԳ ՆՈՐԻՆ ՏԵՍՁՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱԼ ԶԱՆՁՆ ԻՒՐ ԱՆԽՈՆՁ ՏՔՆՈՒԹԵԱՆ ՆՈՐՈԳԵԱԼ ՀԻՄԱՆՅ ԶԱՅՍ ՍՈՒՐԲ ՄԵՆԱՍՏԱՆ, ԳԵՐԱԶԱՆՅ ՅՈՒՅԱԻ ՎԱՐՈՒՔ ՍՐԲՈՒԹԵԱՆ, ԿԱՅԵԱԼ ԱՌԱՋՆՈՐԳ ԲՍԱՆ ԵՒ ԵՐԵՔ ԱՄ՝ ՓՈՒԵՅԵԱԼ ԱՌ ՏԷՐ ԱՐԴԵԱՄԲ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՄԶԹ

(1830, Դիւան, Ժ., էջ 435—436 եւ Երկրագունդ, 1887, էջ 65) :

Յովհաննէսի թաղումէն յետոյ Ս. Նշանի առաջնորդութեան ղեկը ձեռքը կ'առնու անոր կարող օգնականը Կարապետ Սերաստային, որ էջմիածնի մէջ Յովհաննէս Կարեցի կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ 12 տարի իր պաշտօնը յառաջ կը վարէ : Անոր մարմինը Առաքել Ակնցիի նշխարներու մօտ կ'ամփոփուի : Շատ ընդարձակ է տապանապիւղը՝

«ԶԻԱՐԳ ԾՈՅՏ ՓՈՒԵՒ ԿԵՆՅԱՂՈՅՍ ՇՐՁԱՆ, ԶԿԵԱՆՍ ԵՒ ԶՓԱՌՍ ԾԱԾԿԵԱԼ Ի ՄԹԱՆ, ՀՈՅԼՔ ԱՌԱՔԻՆԵԱՅ ԱՍՏԻ ՈՉ ԶԵՐԾԵԱՆ, ԹՈՂԻՆ ՄԱՏՆԱՅՈՅՑ ԶԻՐԵԱՆՅ ԳԱՄԲԱՐԱՆ, ԲԱՂԱՔ ՍԵՐԱՍՏԻԱՅ ՊԱՆԾԱՅ ԱՌ ՅԱՊԱՆ՝ ԳՐԵԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՀԻՍ ԾՆՆԿԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ԲԱՐՈՒՆ՝ ԸՆՏԻՐ ԽՈՂԱԿԱՆ, ՎԱՐՈՒՔ ԵՒ ԲԱՐՈՒՔ ՀԱՄԵՂ ԲԱՂՅՐԱԲԱՆ, Ի ՄԱՆՈՒԿ ՏԻՈՅ ՈՒԽՏԻՍ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ, ԲԱԶՄԱՐԳԻՒՆ ԵՒ ԺԻՐ ՊԱՐԿԵՇՏ ՄԻԱԲԱՆ, ՅՕՀԱՆՆԷՍ ԱՐՀԻՈՅՆ ՄԻՇՏ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ, ՓՈՒԵՆՈՐԳ ԽՈՂԱՄ՝ ԵՂԲԱՅՐ ՄԻԱԿԱՄ, ՅԵՏ ՆՄԻՆ ԵԿԱՅ ԱՄՍ ԵՐԿՈՏԱՍԱՆ, ԱՐԹՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԳ ՈՒԽՏԻՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ, ԿՈԶԵՑԱՄ ՏԵՐԱՄԲ Ի ԿԱՐԳ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՎԵԱՅ ԲԱՐԵՊԵՍ ԶՎԻՃԱԿԱ ՀԱՄԱՅՆ, ԱՒԱՂ ՀԱՆԳԻՊՄԱՆՍ, ՄԻՆՁ ԷՍՔ ԸՍՏ ՄԱՆԿԱՆ, Ի ՍՈՒՐԲ ԳՎՈՒՆՍ ՆՈՐ ՄԵՐ ԱՆՆՄԱՆ,

ԲԱԶՄԱՐԳԻՒՆ ԿԵՆԱՅ ԸՆԿԱԼԱԻ ՎԱՆՃԱՆ, ՅԵՕԹԱՆԱՍՈՒՆ ՀԻՆԳ ԱՄԱՅ ԻՒՐ ԼՄԱՆ, ՀՈԳԻՈՎ ՎԵՐԱՅԱԻ ՅԵՐԿԵԱՅԻՆ ԽՈՐԱՆ, ՄԱՐՄՆՈՎ Ի ԳԱԻԹՍ ԵԴԱԻ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ, ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1842 ԵՒ ՀԱՅՈՅ ՈՒՄԱՆ :

(Դիւան, Ժ., էջ 436, Երկրագունդ, 1887, էջ 65—66) :

Կարապետ Բ. բաւական երկար ժամանակէ վերջ՝³⁰ յաջորդ կ'ունենայ համանուն Կարապետ Գ. էջմիածնի, «այր հմուտ եւ հեղաբարոյ» : Նա Ներսէս Ե. կաթողիկոսէն էջմիածնի մէջ եպիսկոպոսական աստիճանին կը հասնի եւ ապա «բոս իւրովսն կարողութեան հովուէ զՏօտ իւր» (Դիւան, Ժ., էջ 348. հմմտ. եւ Աղաւնունի, Միւրանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 193) : Անոր աճիւնին դամբանապիւղն է՝

ԲԱՆԻ ԱՒԱՂ ՍՐԸՆԹԱՅ ՍԱՀԻՆ ԱՒՈՒՐԲ ՄԵՐ ԿԵՆԱՅ ԵՒ ԳԵՂ ՊԵՐՃԱՆԻ ԻՍԿ ՆՈՐԻՆ ԱՍՏԷՆ Ի ՀՈՂ ԼՈՒԾԱՆԻՆ, ՍԱ ԲԱԶ ԱՐԹՈՒՆ ՀՕՏԱՊԵՏ, ՎԵՐԱԶԱՅՆԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԲՍԱՆ ԵՒ ԶԵՕԹՆ ԱՄ ԿԱԼԱԻ ԶԱԹՈՒ ՍԵՐԱՍՏԵԱՆ, ՎԱՌԵԱԼ ԷՐ ՍԱ ՏԵԱՌՆ Ի ՄԵՐ, ԱԶԳԻՍ Ի ՇԱՀ ՅԱՐ ՏՔՆԷՐ, ԵՒ ՈՒԹՄՆԻՅ ՅԵՏ ԱՄԱՅ, ՓՈՒԵՒ ԱՌ ՏԷՐ Ի ՅԱՍՏԵԱՅ, 1877 (ՌՅԻԶ)

(Երկրագունդ, 1887, էջ 66) :

Կարապետ իր վերջին տարիները ծերութեան եւ ուրիշ խնդիրներուն պատճառով Սերաստայի առաջնորդութենէն կը հրաժարի, բայց Ս. Նշանի վանահայր կը մնայ : Նա իրեն օգնականներ եւ տեղապահներ ունեցած է՝ Շմաւոն վարդապետը, Ներսէս եպիսկոպոսը եւ Պետրոս Վ. Թահմիզեան (Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 106) : Վերջինս ապա Սերաստայի, Կիւրիինի եւ Թօնքատի առաջնորդ կ'ըլլայ եւ Ս. Նշանի ու Անապատի մէջ վերանորոգումներ կ'ընէ (Արեւելք, 1891, Թ. 2289, Հանդ. Ամսօրեայ, 1925, էջ 579, Աղեքսանդրեան, Պատմ. Սերաստ., էջ 306, Արարատ, 1907, էջ 532) :

Պետրոսի յաջորդութեան կը կոչուի Թորոզմ Գուշակեան, որ Ս. Նշանի հայ. Զեռագիրներու ցուցակը կը կազմէ եւ զայն «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ (1922, էջ 461) կը

³⁰ Այս շրջաններուն տեղապահ կ'ըլլան Յեոտը, Համբարձում, Ամբակում, Կարապետ, Նիկողայոս եւ Դաւիթ վարդապետները (Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 105) :

սկսի հրատարակել : Դժբախտաբար հրատարակութիւնը յետոյ հեղինակին կամքովը կը դադարեցուի :

Գուշակեան Սերաստայի եւ Ս. Նշանի վերջին եպիսկոպոս առաջնորդը կ'ըլլայ³¹ : Նա ապա Եզրիպտոսի Հայութեան առաջնորդութիւնը կը ստանձնէ, բայց անկէ կը փոխադրուի Պաղեստին իրրեւ Պատրիարք Երուսաղէմի, ուր եւ կը մեռնի :

Համեւրոպական պատերազմը, ինչպէս Սերաստայի միւս վանքերուն, նմանապէս Ս. Նշանի միւրաններն ու ժողովուրդը կը ցրուէ : Շէնքերու վիճակը կարելի է ենթադրել :

Ս. Նշանի վանքը իրրեւ արքայաշէն հիմնարկութիւն եւ առաջնորդարան Սերաստայի նահանգի վայրած է թաղաւորի եւ իշխանի հողածութիւն եւ ատարկայ եղած ժողովուրդի զուրգուրանքի :

Ստացած է իր հիմնարկութենէն սկսած մինչեւ վերջին ժամանակներս շատ այգիներ ու պարտէզներ, արտեր ու դաշտեր, նաեւ կրպակներ ու ջաղացք, անօթ ու զգեստ, ձեռագիր³² ու տպագիր գիրք, դարձեալ ժամուցներ եւ ուրիշ զանազան նուէրներ : Նիւթականով եղած է շատ հարուստ, սակայն նկատելով իր երկարամեայ գոյութիւնը պիտի ըսինք թէ՛ ազգատ եղած է գրչի ու գրքի միւրաններով ու առաջնորդներով : Անոնք իրենց կեանքն ու գործը նուիրած են հօտին հողեւոր առաջնորդութեանը (Մանգումէի էֆքեար, 1902, Թ. 339, Բիւզանդիոն, 1900, Թ. 2164, 1904, Թ. 2399, 1900, Թ. 2164, Նաթանեան, Տեղգր. Ընդհ. Վիճ. Սերաստայի, էջ 54—61 եւ Նոր Այդ, 1913, էջ 99) :

14.

ՍՈՒԱԿԵՐԱՅ ՎԱՆՔԸ

Խնդրակատար Ս. Աստուածածնի վանքին մերձ է Սոխակերաց կամ Սոխկերուն վանքը, որ այսպէս կոչուած է, վասն զի անոր

³¹ Գիրիշեան կազմած է Սերաստայի եւ Ս. Նշանի առաջնորդներու ցանկը (Արեւելք, 1899, Թ. 4037), որ սակայն սրբագրութեան կարգաւ է :
³² Գուշակ Ս. Նշանի մէջ գրուած ըլլայ Սաղմոսարան մը (Սարգիսեան Հ. Բ., Մայր ցուց. Վենետիկ, էջ 358) : — Տարագրութեան տարիներուն Ս. Նշանի ձեռագիրներն ալ կը ցրուին :

միւրաններն աւանդութեան համաձայն խրատակեաց ճգնաւորներ եղած են եւ սոխ ու հաց ճաշակելով զոհացած : Անոնց բնակավայրերը քարայրներն³³ են եղած, իսկ զբաղումը՝ աղօթք ու մեռուցում (Սարգիսեան Հ. Բ., Տեղագրութիւնք, էջ 65, Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Ա., էջ 166—167, Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 115, Բիւզանդիոն, 1900, Թ. 1083, Նաթանեան, Տեղ. Սեր., էջ 143 եւ Սահակ Մեարոպ, Հայուն Տարեցոյցը, հայկական վերածնունդ, Կ. Պ. 1913, էջ 298) :

15.

ԲԱՌԱՍՆԻՅ ԿԱՄ ԲԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԱՆՅ ՎԱՆՔԸ

Շատ բնական էր որ Սերաստայի Հայութիւնը պանծացնէր անունն ու յիշատակը այն Բառասուն Բաջերուն, որոնք ամէն տանջանքի զիւցաղնարար տոկալով քրիստոնէական հաւատքին համար իրենց խոստումնալից կեանքը կը զոհեն³⁴ : Անոնց անունովը Սերաստայի արեւմտեան կողմը վանք մը կը կառուցուի հոյակապ տաճարով, որ ունէր քառասուն դմէթիկ (Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 429, Սրուանձտեանց, Թոր. Աղ., Ա., էջ 153—154, Պալեան, Հայ Վանօրայք, Ա., էջ 112—113, Բիւզանդիոն, 1909, Թ. 1049) : Յաւալի է որ այս վանքի մասին բաւարար տեղեկութիւններ կը պակսին : Ինծի միայն հետեւեալ յիշատակագրութիւնները ծանօթ են. «Թվին ՊԼԳ (1314) Բուհանդատին եսպան գոտէն Սեփաստիոյ, զՍտեփանոս եպիսկոպոս նահատակեաց եւ զՔառասնից վանքն քակեաց» (Տաշեան, Մայր ցուց., էջ 871. հմմտ. Առ. Դաւրիթեցի, Պատմ., էջ 627 եւ Հայ Նոր Վիպներ, էջ 1(4) : Չամչեան այս աթիւր զիտել կու տայ որ Բառասնից կործանարարը՝ Լէնկթիմուրն է (Պատմ. Հայոց, Գ., էջ 429) : Գանձարանի մը մէջ — գրուած 1576ին — կայ՝ «Լանկթամուրն, ձալալին, Ելեր, Հայոց թվն. ՊՃԼԶ (1387) ամին եւս Սերաստեան սուրբ քառասուն Մանկան զեղեցիկ Խ. խորանէն եղեալ սուրբ

³³ Գարայրի մը մուտքին վրայ կայ՝ «ՆՈՒՆԱՅ, ԵՍ ՀԱՅՐ (ՍՏԵՓԱՆՈՍ ՅԱՆԳԱՆԿԱՅԱ ԵՒ ՅԱԻՐԻՆԵՑԻ Ս(ՈՒ)ՐԲ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՈ(Ի)ԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՅ (Ե) ԵՒ, ՅԻՇԱՍԱԿ ԻՆՁ» (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 65) :
³⁴ Հմմտ. եւ «Սերաստիոյ Բառասուն մանկանց կտակը» (Բազմավէպ, 1928, էջ 99) :

եկեղեցին մեր ծովացեալ մեղացն Հաճի Պուր-
հանատի դատին քայքայեր է եւ ինքն ալ ի
ձեռաց թուրքման հրամանէ սպանվեր է,
թվին Հայոց ՊՃԼԶ» (Հանդէս Ամսօրեայ,
1927, էջ 315):

Սոճա Շիրին 1555ին ձաշոց մը կը դնէ՝
«Ի դրուես սուրբ Լուսաւորչին եւ սուրբ Քա-
ռանիցն» (Հանդ. Ամս., 1926, էջ 336), իսկ
Մարտիրոս սարկաւազը 1568ին «Ի Սեբաս-
տիա ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին եւ
Խ. վկայիցն» Շարակնոց մը կը գրէ (Ակի-
նեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Հ. Պոտու-
րեանէ): Ապա 1576ին՝ «Ընդ հովանեաւ
սրբոց Քառանիցն Աւետարան մը կը գրուի
(Հանդէս Ամս., 1925, էջ 470): Իսկ անկէ
երեք տարի վերջ — 1579ին Թաղէոսի ձեռ-
քով ուրիշ Աւետարան մը կը գրուի (Ակի-
նեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Տէր Աւե-
տիսեանի Նոր Զուգայի հայ. Զեռ. ցուցակէն
Թ. 90): Քանի մը տարի յետոյ Մարտիրոս՝
«Ի քաղաքս Սեբաստիա ընդ հովանեաւ սուրբ
Աստուածածնին եւ սրբոց Քառանիցն» Աւե-
տարանի մը արտագրութիւնը կ'աւարտէ
(Հանդ. Ամս., 1925, էջ 473):

Արդէն Հ. Ինճիճեան Քառանից վանքին
համար կը գրէր՝ «անհետ է ամենեւին³⁵
Նոր Հայաստան, էջ 286):

(Շարունակելի):

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ



³⁵ Ամայտացած վանքի մը տեղն ալ կայ Պինկէօլ
(Բիւրակն) գիւղի մօտերը, ուր Բրքնիբցիները սիրով
ուխտի կ'երթային (Սահակ-Մեսրոպ, Հայուն Տարե-
ցոյցը, հայկ. վերածնունդը, Կ. Պոլիս, 1913, էջ 29):

ՏԵՂԵԳՐԵՎԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹ ԻՆՆԵՐ ՎԵՐԳԱՆԱՅԵՍ

Միակ կարեւոր վկայութիւնը, զոր ու-
նինք Վարդանաշատի համար, կը ներկայա-
նայ Եղիշէի վերոյիշեալ տեղիքը (ՀԱ. 1944,
էջ 14)՝ «Յետս կացեալ (Վասակայ) յուխտէն
քրիստոնէութեան եւ աւերեալ զբազում տե-
ղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս
արքունի, որ կայեանք զօրացն էին, զԳնու-
նին եւ զԵրամօնս եւ զԴրսհանակերտն զմեծ
դաստակերտն, զՎարդանաշատ եւ զամուրն
Օշական» եւն (Պատմ. 60): Կը յիշուի նաեւ
Վարդանի մօտ համանուն դաւառ մը «Չա-
ղաղա Նոյինն էառ զԼօսէ քաղաք եւ որք
յայնր կողմանէ դաւառք, Դոլաղա Նոյինն
զկայեն բերդ, ուստի հանին զԱւաղն տէր
երկրին. եւ Չարմաղանն զԱնի եւ զԿարս եւ
զմերձակայսն. Ղատաղա Նոյինն զկողմանս
Չարեքին, զԳետարակուց եւ զՎարդանաշա-
տու» (Պատմ. Վենետ. 1862, 144), որ սա-
կայն Եղիշէի յիշած Վարդանաշատին հետ
գործ չունի: Եթէ հին մատենագիրներն
այսքան ճշգրիտ եղած են իրենց վկայութիւն-
ներով Վարդանաշատի մասին, գրեթէ նոյն-
քան ժլատ եղած են նորագոյն հետազոտող-
ները:

Ինճիճեան (Ստոր. Հ. Հայաստանեայց,
Վենետ. 1822, 538) պարզապէս յառաջ կը
բերէ Եղիշէ վկայութիւնն առանց որեւէ մեկ-
նութիւն մը տալու: Իսկ Ալիշան ոչ Այրա-
րատի եւ ոչ ալ Շիրակի մէջ ակնարկութիւն
մը ունի այս մասին: Հիւրըման (Հ. Հ. Տեղ.
Անունները, Վիեննա 409) թէութեամբ մը կը
հարցնէ՝ Այրարատ նահանգի մէջ. երկրորդ
մը «Գետարակը»ի հետ յիշուած (Վարդան
144):

Այս խոսքն զետիւնը կը փորձենք արօ-
րադրել, յուսալով ձեռք բերել արդիւնաւէտ
հունձք մը: Եղիշէի տեղիքը մեզ կը ստիպէ
ամէն պարագային Վարդանաշատը գնելու ընդ
մէջ Դրասխանակերտի եւ Օշականի, ուրեմն
աներկբայ Այրարատեան նահանգին մէջ:
Արդ Դրասխանակերտի եւ Օշականի միջեւ
կամ անոնց մերձաւոր կը ներկայանան երկու
ամրոց, մին Բիւրական եւ միւսն Ամբերդ-
Անբերդ: Առաջինի մասին զիտենք թէ Յովհ.

Պատմարանի ստացուածքն էր եւ ձեռակերտ
ամրոցիկը՝ «Եւ դարձեալ չու յուղի անկեալ
չողաք մինչեւ ի ձեռակերտ ամրոցիկն իմ
Բիւրական, զոր ստացեալն էր իմ դանձի
գնոյ, ուր եւ շինեալ յարդարեալ իսկ էի եկե-
ղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պեր-
ճապածոյճ պճնողութեամբ եւ նկարակերտ
յօրինուածով, եւ վանս կուսակրօն միանձ-
նացելոց զնա հաստատեալ» (Յովհ. Պատմ.
Թիֆլիս 1912, էջ 336): Ուստի Բիւրական
իրբեւ փոքրիկ ամրոց եւ ձեռակերտ Յովհ.
Կաթողիկոսին՝ Ժ. դարու գործ՝ կարելի չէ
Վարդանաշատ ամուր բերդին հետ նոյնաց-
նել: Որով կը մնայ Ամբերդ, որ իր հնու-
թեամբ եւ ամուր դիրքով, ռազմագիտական
կարեւորութեամբ եւ արժէքով հանդիտա-
պատիւ կը հանդիսանայ Վարդանաշատի եւ
ԺԱ. դարէն սկսեալ շատ յաճախ կը յիշա-
տակուի հայ մատենագիրներէ: Այսպէս
առաջին վկայութիւնն ունինք Մաղխատրոսի
մօտ. «Ընկալայ զբեր քո սրբազան վար-
դապետ. ունէր զայս պատճէն բանից, եթէ
կարօտէի տեսանել զքեզ եւ եկի յԱմ-
բերդ, առաքեալ ի մանկամիտ արքայէ»
(Կոստանեանց, Գ. Մաղխատրոսի Թղթերը,
Աղեքսանդրապոլ 1910, էջ 64): Իսկ հետա-
գայ մատենագիրներէ կը յիշուի այս ա-
նունը կարեւորագոյն բերդերու կարգին:
«Ի ՆՈՒԹ Թուին մեռաւ Գաղիկ, տուեալ զԹա-
գաւորութիւնն երկց որդեց իւրոց, Յով-
հաննիսի, Աբասայ եւ Աշոտոյ: ԶԹաղն տայ
Յովհաննիսի եւ զԱնի եւ զՇիրակ. զսուրբ
Գրիգոր Զորովն Աշոցաց, զԱն բերդ եւ
զըւշտն Այրարատեան...» (Վարդան, Պատմ.
էջ 92): Նոյն հեղինակը դարձեալ այլուր կը
կրկնէ, «Ի ՈՒՆ Թուին առին զԱնբերդ եւ ի
ՈՒՉ Թուին առին զԱնի» (Անդ, էջ 138: Կի-
րակոս Գանձակեցի խօսելով Զաքարէի եւ
Իւանէի մասին, կ'ըսէ, «Սոքա բազում
մարտս քաջութեան տային. քանզի զբազում
աշխարհս Հայոց, զոր ունէին Պարսիկք եւ
Տաճկունք՝ առին ի նոցանէ յինքեանս. զգա-
ւառն որ շուրջ զԾովովն Գեղարքունոյ,
դՏաշիւր եւ զԱյրարատ, զԲնի քաղաք եւ
զԴուին, եւ զԱնբերդ եւ զԱնի եւ զԿարս եւ
զՎայոց ձորն» (Կիր. Պատմ. Վենետ., 1865,
էջ 79):

Նոյն իշխաններու սերունդէն Մեծին
Սարգսի մէկ արձանագրութեան մէջ՝ «Եւ ետ
(Աստուած) ի ձեռս մեր յառաջ զանառիկ
զղեակն զԱնբերդ եւ թագաւորանիստ քա-
ղաքն Անի եւ ապա զամուրն Բնի...» (Կոս-
տանեանց, Վիմական Տարեգիր, Պետերբ.
1913, էջ 141): Իսկ Դաւրիթեցոյն քով նոյ-
նացուած է արդէն Արագածոտն դաւառին
հետ. «Այս Սարգիս եպիսկոպոս էր յաշխար-
հէն Արարատեան, ի գաւառէն Ամբերդոյ, որ
է Արագածոտն» (Պատմ. Վաղարշապատ,
1896, էջ 249):

Այսքան նշանաւոր եւ կարեւոր բերդ մը,
որ նոյն իսկ Արագածոտնի համազօր դրուած
է, դժուարաւ կարելի է համարել թէ տան-
երորդ դարէ յառաջ անյիշատակ մնացած
ըլլար հայ մատենագիրներէ: Այն նկարա-
զրուութիւնը, զոր կու տան մեզի Շահխաթու-
նեանց (Ստորագրութիւն Կաթող. էջմիածնի,
էջմիածին 1842, էջ 70—71) եւ Ալիշան
(Արրտ., Վենետ. 1890, էջ 156) Անբերդի
հին աւերակներու մասին, կը հաստատէ թէ
այդ ամրոցը շատ հին է, հետեւաբար այն
հնամենի գոյութիւն մը ունէր եւ յառաջ կը
կրէր այլ անուն մը՝ ՎԱՐԴԱՆԱՇԱՏ: Ինչ-
պէս Դրասխանակերտ հնագոյն անունը տեղի
տուած է յետնագոյն Աշտարակ անունն, այն-
պէս ալ Վարդանաշատ հետագային փոխա-
նակուած է Ամբերդ—Անբերդով:

Հ. Պ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

